

ևս մեկ քայլ՝

ԲԻԶՆԵՍԻՆ ԸՆԴԱՌԱԶ



Եռամսյա պարբերականությամբ
հրատարակվում է
«Զարկատու» ամսագիրը

բոլոր հարցերն
ունեն իրենց
պատասխանները՝

www.tax.nk.am



6



15



20



24

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

tax ՊԵՏՏՈՆԱԿԱՆ

6

- 6 Աշխատանքային հանդիպում նախագահականում. հստակ պահանջներ և հանձնարարականներ
ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյան. «Հարկայինը պետք է լինի ոչ թե պարզապես հարկեր հավաքագրող, այլ տնտեսության ընդհանուր զարգացման մեջ իր չափաբաժինն ունեցող կառույց»

tax ԼՈՒՐԵՐ

8

- 8 Բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված տնտեսությունը՝ միջազգային ճանաչման երաշխիք
 Հարցազրույց Տնտեսական զարգացման նախարար Կարեն Եսայանի հետ

tax ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

15

- 15 Ե՛վ փոքրերը, և՛ խոշորները օպերատիվի թիրախում են. նշանակետն օրինախախտներն են
 «Անբարեխիղճ տնտեսավարողներն ամենից առաջ բարեխիղճ հարկատուներին են վնասում», -հայտարարում է օպերատիվ հետախուզության վարչության պետ Իգոր Գրիգորյանը

tax ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

18

- 18 Գերակատարումներ՝ բոլոր ուղղություններով
 Պետբյուջեի 66.8 տոկոսն ապահովվել է հարկային եկամուտների հաշվին

tax ՌԵՊՈՐՏԱԾ

20

- 20 Մրցադաշտում խոշորներն են. Ո՛վ կհայտնվի խոշոր հարկատուների պատվավոր ցանկում
 Հարցազրույց ՀՊԾ խոշոր հարկ վճարողների վարչության պետի պաշտոնակատար Արմեն Գրիգորյանի հետ

tax top

24


- 24 Նոր հայացք՝ փոքր բիզնեսին
 «Փոքր բիզնեսը պետք է զգա, որ պետության ուշադրության կենտրոնում է. առաջին՝ օրենսդրական քայլերն արված են»
 Հարցազրույց ԼՂՀ ՀՊԾ մեթոդաբանության և հարկային վարչարարության բարեփոխումների բաժնի պետ Արմինե Մուսայելյանի հետ



34



38



42



51

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

tax ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐ 28

28 ԼՂՀ խոշոր հարկատուները

tax ՈՒՈՐՏ 34

34 **The best.** արտասահմանյան շուկաներում պահանջում են «Արցախֆրուտ».
 ընկերության արտադրանքի 80 տոկոսն արտահանվում է

38 «Վիրջինիա», «Բեռլեյ», «Սամսոն»՝ Արցախից.
 «Մասիս տոբակո»-ն վերականգնում է ավանդույթները

40 **Made in Մարտակերտ**
 «Արզի գրուպ»-ը վերադարձրել է սպասված նախադասությունը

42 **Welcome to «Պարկ հոթել Արցախ».**
 Ե՛վ հանգստանալու, և՛ Արցախը ճանաչելու նոր հնարավորություն

tax ԲԻԶՆԵՍ 44

44 «Առաջին փուլում նվազագույնի ենք հասցնելու վնասները»
 Հարցազրույց «Էյ Ի Ջի» ընկերության գլխավոր տնօրեն
 Լևոն Մնացականյանի հետ

48 «Կա ցանկություն, կլինի և բիզնես».
 «Հազարամյակի» բանաձևն է բացահայտել «Միլենիում»
 ընկերության տնօրեն Սամվել Սեյրանյանը

tax ԱՇԽԱՐՀ 50

50 Անգլիական ֆուտբոլի հարուստները խուսափում են հարկերից

51 Լոնդոնը կրճատում է կորպորատիվ հարկերը.
 Մեծ Բրիտանիան՝ G7-ի հարկային առաջատար

ԹԵԺ ԳԻԾ
Վստահություն
Հրատապություն
Հետևողականություն
(+374 47) 948-620



ԼՂՀ ԿԱ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

ԹԻՎ 2(4) 2011

Գլխավոր խմբագիր՝
Նելլի Մանուչարյան

Հեղինակներ՝
Շաքե Ղազարյան
Արմինե Մուսայեյան
Նորայր Հովսեփյան

Արտ խումբ՝
Գևորգ Գաբրիելյան
Նելլի Բարսեղյան
Նաիրա Պետրոսյան

Գովազդ և մարկետինգ՝
Հեռ.՝ 94 86 20

Հրատարակության 2-րդ տարի
Ծավալը՝ 52 էջ
Տպաքանակը՝ 2000

Տրված է տպագրության
17.05.11

Հեռ.՝ 94-86-20
Էլ. փոստ՝ info@taxservice.nk.am

Մեջբերումներ անելիս հղումը
«Հարկատու» ամսագրին
պարտադիր է:

Ամսագրի հղվածների մասնակի կամ
ամբողջական հեռուստառադիոընթերցում
առանց «Հարկատու» ամսագրին
վկայակոչելու արգելվում է:

Ամսագիրը տպագրվում է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում:

Հարկային ծառայությունը պետք է գործի արդար ու անկողմնակալ, հենց այսպիսի ծառայություն է հարկային մարմիններից ակնկալում երկրի ղեկավարությունը, ինչը ևս մեկ անգամ Նախագահ Բակո Սահակյանն ընդգծել է աշխատանքային հերթական հանդիպման ժամանակ: Արցախի ղեկավարը հիշեցրել է, որ հարկային քաղաքականությունը չի սահմանափակվում

զուտ տնտեսական ոլորտով և անմիջականորեն առնչվում է սոցիալական և քաղաքական բազմաթիվ հիմնախնդիրների հետ: Այս համատեքստում Բակո Սահակյանը կարևորել է հարկային վարչարարությունն իրականացնող մարմնի գործունեությունը և, ընդհանուր առմամբ, բավարար գնահատել անցած տարի ծառայության կողմից իրականացված աշխատանքները:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆՈՒՄ. ՀՍՏԱԿ ՊԱՅԱՆՋՆԵՐ ԵՎ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ



Հարկային ծառայությունն անցած տարի կարողացել է ապահովել եկամուտների հավաքագրման պլանավորված ցուցանիշները: Այդ փաստն, իհարկե, Նախագահը դրական է գնահատել, սակայն ծառայությունից միայն եկամուտների հավաքագրում չի ակնկալվում: «Այս մարմինը յուրահատուկ դեր ունի պետական քաղաքականության իրականացման գործում: Այն պետք է լինի

«Պետք է քայլեր ձեռնարկեք՝ բացառելու համար ստվերն աշխատավարձը վճարելու ժամանակ»,-երկրի ղեկավարի պահանջն է:

ոչ թե պարզապես հարկեր հավաքագրող, այլ տնտեսության ընդհանուր զարգացման մեջ իր չափաբաժինն ունեցող կառույց»,-ընդգծել է Բակո Սահակյանը: Այս առումով երկրի ղեկավարն եական է համարում հարկա-

տուների հետ տարվող բացատրական աշխատանքը, տեղեկատվական նյութերի հրապարակումը, պաշտոնական կայքէջի ստեղծումը, Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման գործընթացի մեկնարկը: Առաջադրված խնդիրների լուծման հարցում ոչ պակաս կարևոր է նաև համակարգում տարվող կադրային քաղաքականությունը, և հարկայինի աշխատակիցներին



ԼՂՀ ՆԱԽԱԳԱՅ ԲԱԿՈ ՍԱՅԱԿՅԱՆ.

«Չարկայինը պետք է լինի ոչ թե պարզապես հարկեր հավաքագրող, այլ տնտեսության ընդհանուր զարգացման մեջ իր չափաբաժինն ունեցող կառույց»:

ուղղվել է Նախագահի կողմից՝ հետևել օրենքի տառին:

Չենց այս սկզբունքներով էլ հարկայինը պետք է առաջնորդվի ընթացիկ տարում՝ նախանշվող ուղղություններով ձեռնարկելով գործուն քայլեր:

Չարկային ծառայության պետ Արտակ Բալայանը և ստորաբաժանումների ղեկավարները ներկայացրել են 2010-ին գերատեսչության կողմից կատարված աշխատանքները և այս տարվա անելիքները: Չեկույցներում ոչ միայն եկամուտների ապահովման ընթացքը

է ընդգծվել, այլև՝ վերլուծվել ռեալ իրավիճակը: «Պետք է քայլեր ձեռնարկեք՝ բացառելու համար ստվերն աշխատավարձը վճարելու ժամանակ», -երկրի ղեկավարի պահանջն է:

Նախագահի ուշադրությունից չի վրիպել նաև հարկային ծառայողի վարքն ու պահվածքը. ծառայության յուրաքանչյուր աշխատակից խստորեն պետք է առաջնորդվի վարքագծի կանոններով՝ գիտակցելով, որ իր կողմից ոչ պատ-

շաճ վարքի դրսևորումը ստվեր է գցում ողջ կառույցի հեղինակության վրա:

Մյուս խնդիրն արտաքին ապրանքաշրջանառության հաշվառմանն ու հսկողությանն է վերաբերում: Երկրի ղեկավարը պատրաստակամ է այս ոլորտում ծագող հարցերը լուծելու խնդրում: Խոսքը նյութատեխնիկական բազայի, աշխատողների սոցիալական վիճակի մասին է: Փոխարենը պետությունն ակնկալում է մեկ բան՝ ազնիվ ծառայություն: ☑

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿՐԱ ԶԻՄՆՎԱԾ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

- Պարոն Եսայան, որո՞նք են ԼՂՀ տնտեսության զարգացման յուրահատկությունները՝ հաշվի առնելով հանրապետության ներկա կարգավիճակը:

-Մենք գիտակցում ենք միջազգային տնտեսական հարաբերություններում ներգրավված լինելու և ինտեգրացիոն գործընթացներում երկրի ակտիվ մասնակցության կարևորությունը: Սակայն միջազգային ինտեգրման համար նախնառաջ կարևոր նախապայման է տարածաշրջանային ինտեգրումը, առանց վերջինիս առաջինը զգալիորեն դժվարանում է: Տարածաշրջանում տիրող իրավիճակից ելնելով՝ մեր երկրի համար այդքան էլ մատչելի չեն արտաքին աշխարհի դուրս գալու դասական ուղիները: Դրա համար անհրաժեշտ են առաջին հերթին համապատասխան արդյունավետ ենթակառուցվածքներ՝ ի դեմս տրանսպորտի, կապուղիների: Փաստորեն, արտաքին աշխարհի հետ մեր անմիջական կապն այսօր միայն Հայաստանի միջոցով է, և այստեղ մեր հնարավորությունները զգալիորեն սահմանափակվում են:

Այնուամենայնիվ պետք է ձգտենք կենտրոնանալ ոչ միայն այն հնարավորությունների վրա, որոնցից մենք զրկված ենք, այլև նրանց վրա, որոնց տիրապետում ենք: Այսօր քաղաքակիրթ և գրագետ մարդկանցով փոքր երկիրը մեծ հնարավորություն ունի իր ուղին հարթելու:

- Զճանաչված լինելու հանգամանքն ի՞նչ հնարավորություններից է զրկում Արցախին: Դրանք փոխհատուցելու որևէ այլընտրանք կա՞:

-Դե յուրե չճանաչված լինելն, ինչ խոսք, սահմանափակում է միջազգայնորեն ներկայանալու և համաշխարհային



«Քաղաքակիրթ և գրագետ մարդկանցով մեր փոքր երկիրն իր ուղին հարթելու մեծ հնարավորություններ ունի»:

Սիջազգային շուկայում թանկանում են էներգակիրները: Սննդամթերքի գների աճը, որ սկսվել է շուրջ երկու տարի առաջ, դեռ շարունակվում է, և, դատելով զարգացումներից՝ նահանջելու միտք էլ չունի: Սա հրատապ այն խնդիրներից է, որի լու-

ծումն, ըստ էության, այդպես էլ չգտան անգամ գերտերությունները՝ իրենց հզոր տնտեսական համակարգով: Այս պարագայում որո՞նք են ԼՂՀ տնտեսության առաջնահերթությունները: Վերլուծում է Տնտեսական զարգացման նախարար Կարեն Եսայանը:



տնտեսական ասպարեզում առավել մեծ ակտիվությամբ մասնակցություն ցուցաբերելու, ինչպես նաև երկրի աստիճանավելի լայն լսարանին ներկայացնելու և ընդունելի դարձնելու հնարավորությունները: Մյուս կողմից, սակայն, գլխավորը ոչ թե կնքված միջազգային պայմանագրերի քանակն է, այլ դրանց արդյունավետությունը: Այդ իսկ պատճառով պետք է երկկողմ և բազմակողմ սերտ կապեր հաստատել՝ հիմնվելով բացահայտված մրցակցային առավելությունների, ճիշտ ընտրված ռազմավարական մոտեցումների և գրագետ սահմանված առաջնահերթությունների վրա:

- Որո՞նք են Արցախի տնտեսության առաջնահերթությունները՝ հաշվի առնելով հենց միջազգայնորեն չճանաչված լինելու հանգամանքը:

- Առաջին հերթին, միանշանակ, ազգային անվտանգությունը և ԼՂՀ միջազգային ճանաչումը: Մենք պետք է նաև կարողանանք ճիշտ գնահատել մեր մրցակցային առավելությունները. չօգտագործված հնարավորությունները մեր նման երկրի համար անթույլատրելի են: Դա ամենից առաջ վերաբերում է գյուղատնտեսության ոլորտին և վերամշակող արդյունաբերության զարգացմանը: Գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը շարունակում է մնալ առաջնահերթ խնդիրների շարքում, և մեր երկրի նման փոքր, առավել ևս՝ միջազգայնորեն չճանաչված պետությունները, պետք է կարևորեն ժամանակի պահանջներին բավարարող կրթության և գիտության որակյալ համակարգի զարգացումը և բարձր տեխնոլոգիաների ոլորտում նորագույն ձեռքբերումների վրա հիմնված տնտեսության ձևավորումը:

- Համաշխարհային շուկայում արձանագրված գնաճը նկատելի է հատկապես սննդամթերքի մասով: Դա Արցախի համար լրացուցիչ խնդիրներ՞, թե՞ լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում:

-Եթե խոսքը վերաբերում է անևշան՝ 3-4 տոկոս գնաճին, ապա այն կարող է խթանել արտադրությունը, ինչը չի կարելի ասել երկնիշ տեմպերով գնաճի մասին: Իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր երկրի սպառողական զամբյուղի կառուցվածքում պարենային ապրանքներն ունեն մեծ տեսակարար կշիռ՝ 59,3 տոկոս, դրանց գների փոփոխություններով պայմանավորված՝ լուրջ փոփոխությունների են ենթարկվում նաև սպառողական գները: Իսկ դա ԼՂՀ տնտեսության համար լրջագույն խոչընդոտ է, հատկապես հետձգնաժամային առողջացման ճանապարհին:

- Առաջնահերթությունները, կարծես, արդեն հստակեցված են: Ձեր դիտարկմամբ, ի՞նչ միջոցներ են պետք դրանք իրագործելու համար:

-Պարենային անվտանգության ապահովման տեսանկյունից մեր երկրում անհրաժեշտություն է տեղական արտադրության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, հատկապես՝ կարևորելով գյուղմթերքների արտադրությունը և դրանց վերամշակման կազմակերպումը: Գործարար և ներդրումային միջավայրի բարելավման գործում կարևոր է բիզնես սկսելու և զարգացնելու համար պահանջվող վարչական ընթացակարգերի պարզեցումը, հասարակական իրազեկվածության ապահովումը, պետության և մասնավոր հատվածի համագործակցության բարելավումը, ինչի ուղղությամբ այժմ աշխատանքներ են

Ներդրողների համար հարկային դաշտում սահմանվում են որոշակի արտոնություններ, աշխատանքներ են տարվում փոքր և միջին ձեռնարկությունների աճի և զարգացման խթանման, ներդրողների պաշտպանվածության բարձրացման համար: Այս բոլոր քայլերն ուղղված են օտարերկրյա ներդրողների համար արցախյան տնտեսական ոլորտում գրավչության բարձրացմանը:


տարվում: Բացի այդ, մենք կարևորում ենք բիզնես սկսելու համար թույլտվությունների՝ լիցենզավորման, ստանդարտացման և սերտիֆիկացման համակարգերի, նորմերի խստացումը՝ առաջին հերթին նպատակ ունենալով ձեռք բերել

Միջազգային տարբեր տնտեսական համաժողովներում մեր երկրի մասնակցությունը կնպաստի միջազգային հանրության կողմից Արցախի ճանաչմանը:

սննդամթերքի արտադրության համապատասխան որակ և մակարդակ, արդյունքում այդ չափանիշների համապատասխանելը դարձնել կորպորատիվ կառավարման մշակույթ և հետո միայն խստացնել վերահսկողության տեսչական միջոցառումները:

- Պարոն Եսայան, ինչո՞վ կարող է արցախյան տնտեսական դաշտը գրավիչ լինել օտարերկրյա ներդրողների համար:

-ԼՂՀ օրենսդրությամբ՝ ներդրողների համար հարկային դաշտում սահմանվում են որոշակի արտոնություններ, աշխատանքներ են տարվում փոքր և միջին ձեռնարկությունների աճի և զարգացման խթանման, ներդրողների պաշտպանվածության բարձրացման համար: Այս բոլոր քայլերն ուղղված են օտարերկրյա ներդրողների համար արցախյան տնտեսական ոլորտում գրավչության բարձրացմանը: Սակայն նախ և առաջ պետք է նշել գրավչությամբ




**Գործարար
և ներդրումային մի-
ջավայրի բարելավման գոր-
ծում կարևոր է բիզնես սկսելու
և զարգացնելու համար պահանջվող
վարչական ընթացակարգերի պարզե-
ցումը, հասարակական իրազեկվածու-
թյան ապահովումը, պետության
և մասնավոր հատվածի համագոր-
ծակցության բարելավումը, ինչի
ուղղությամբ այժմ աշխա-
տանքներ են
տարվում:**

յան համար առաջնային՝ Արցախի նորաստեղծ և դեռևս ձևավորվող գործարար միջավայրի և մրցակցային շուկայի մասին: Աճող պահանջարկը և ոչ լիարժեք առաջարկը, պետության կողմից իրականացվող քաղաքականությունը բիզնես սկսելու և զարգացնելու համար էական խթան են:

Այսօր մեր կառավարությունը նաև ակտիվ մասնակցում է միջազգային տարբեր համաժողովներին, ցուցահանդեսներին, որտեղ ներկայացվում է Արցախը՝ իր տնտեսական գրավչությամբ:

- Այս տարի առաջնահերթ ո՞ր քայլերն են կառավարության տեսադաշտում:

-Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը պետության կողմից մեծ աջակցության է արժանանում: Տնտեսական զարգացման նախարարության նախաձեռնությամբ «Գործարարների միության» ստեղծումը մեծապես կնպաստի նշված խնդիրների լուծմանը: Այն երկուստեք արդյունավետ կլինի՝ և՛ պետական, և՛ մասնավոր հատվածի հա-

մար: Ոլորտային տարբեր կրթական ծրագրերի իրականացումը կօգնի մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը, որոնց կարիքը մենք այսօր շատ ենք զգում: Իսկ միջազգային տարբեր տնտեսական համաժողովներում մեր երկրի մասնակցությունը կնպաստի միջազգային հանրության կողմից Արցախի ճանաչմանը: 



ՕՂԻՅ ՓՈՂ՝

ՇԱՐՔԱՅԻՆ ՍԻՆՏԱԿՊՈՒՐՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կառավարությունը պարզևատրում է բնակիչներին ռեկորդային ՀՆԱ-ի համար: Սինգապուրի կառավարությունն ավելի քան 1 մլրդ դոլար է վճարել բոլոր չափահաս սինգապուրցիներին՝ որպես յուրօրինակ «շահութաբաժին»:

2010թ. Սինգապուրի տնտեսությունն աճել է 14,5%-ով, ինչն այս երկրի 45-ամյա պատմության ընթացքում առավելագույնն է: Այս կապակցությամբ քաղաքացիության իշխանությունները որոշել են պարզևատրել իրենց բնակիչներին: Մինչև 2011թ. մայիսի 1-ը Սինգապուրի կառավարությունը, ընդհանուր առմամբ, ավելի քան 1 մլրդ դոլար է վճարել բոլոր չափահաս սինգապուրցիներին: Ֆինանսների նախարար Տարման Շանմուգարատնամը հայտարարել էր, որ յուրաքանչյուր սինգապուրցի կստանա 230-630 դոլար. գումարը կախված կլինի եկամուտների մակարդակից: Բացի այդ՝ Սինգապուրի կառավարությունն այս՝ նախընտրական տարում կառանձնացնի 5,2 մլրդ դոլար, որպեսզի օգնի իր քաղաքացիներին՝ հումքի գների և ծախսերի աճի ճնշումները հաղթահարելու համար: «Գնաճն այս տարվա ընթացքում գլխավոր սպառնալիքն է յուրաքանչյուրիս համար», - ասել է Շանմուգարատնամը: BBC-ի հաղորդմամբ՝ Սինգապուրի համար գնաճի նպատակային ցուցանիշը 3-4%-ն է:

«Որպես երկիր, որը ներկրում է այն ամենը, ինչը սպառում է, մենք մշտապես ենթարկվում ենք գլոբալ գնաճի ազդեցությանը: Այս անգամ խոսքը գլխավորապես պարենի, կոմունալ ծառայությունների և վառելիքի հետ կապված ծախսերի մասին է», - ասել է Սինգապուրի ֆինանսների նախարարը:

Սինգապուրցիներին տրվող օգնության փաթեթը, ներառյալ բոլոր արտոնություններն ու վճարումները, կարող է գերազանցել 10 մլրդ դոլարը: Սինգապուրյան Asia One-ի հաղորդմամբ՝ փաթեթում կներառվեն տնային տնտեսությունների 2 մլրդ դոլարի հարկային ար-

տոնությունները, ինչպես նաև 2,7 մլրդ դոլարի երկարաժամկետ սոցիալական ներդրումները:

Ցածր վարձատրվող սինգապուրցիների կենսամակարդակի բարձրացման համար Սինգապուրն ընթացիկ տարում կծախսի մոտ 2,5 մլրդ դոլար: Սինգապուրցիների համար եկամտահարկը կկրճատվի 4-39%-ով՝ կախված եկամտի մակարդակից, իսկ հարկային դուրսգումները կկազմեն շուրջ 1,5 հազար դոլար:

Սինգապուրի իշխանությունները մինչև 2020թ. ակնկալում են արտադրողականության և իրական աշխատավարձերի բարձրացում 30%-ով: Նման տեսակետ է հայտնել Շանմուգարատնամը: Մյուս կողմից՝ Սինգապուրի կառավարությունը մտադիր է բարձրացնել օտարերկրյա աշխատակիցների համար հարկերը գրեթե բոլոր ոլորտներում: 2011թ. արտադրության և ծառայությունների ոլորտի աշխատակիցների հավաքագրումները կկազմեն մոտ 800 դոլար: Սինգապուրի ֆինանսների նախարարությունն առաջարկում է հարկերից ազատել բանկերի և ֆինանսական այլ ինստիտուտների բոլոր տոկոսավճարները՝ սկսած նոր ֆինանսական տարուց: Սինգապուրը նաև 20%-ով կկրճատի ընկերությունների շահութահարկերը և հատուկ գումարային պարզևավճարներ կտրամադրի մանր և միջին ձեռնարկություններին:

Փորձագետների կարծիքով՝ սինգապուրյան տնտեսության զարգացումը 2011թ. այնքան բուռն չի լինի, որքան 2010թ. էր: Ըստ տարբեր կանխատեսումների՝ ընթացիկ տարում Սինգապուրի ՀՆԱ-ի աճը կկազմի 5-7%: Այս կանխատեսումները մասամբ պայմանավորված են 2011թ. առաջին եռամսյակում տեխնիկայի, սմարթֆոնների ու պլանշետների մեծ պահանջարկով:

Չ **Հարց.** *Օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված և հարկային մարմնում հաշվառված հասարակական կազմակերպության ֆինանսական աղբյուրներն են դրամաշնորհները և անդամավճարները: Կազմակերպության շահառուներին, կանոնադրական գործունեության շրջանակներում, դրամական և բնամթերային ձևով տրվող օգնությունները հարկվու՞մ են, արդյոք, եկամտահարկով:*

Պատասխան. «Եկամտահարկի մասին» ԼՂՅ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ ԼՂՅ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված և հարկային մարմիններում հաշվառված ոչ առևտրային կազմակերպությունների միջոցներից կանոնադրական գործունեության շրջանակներում ֆիզիկական անձանց դրամական և բնամթերային ձևով ցույց տրվող օգնության գումարները հանդիսանում են նվազեցվող եկամուտներ և նվազեցվում են ֆիզիկական անձի համախառն եկամտից: Տվյալ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել նաև «Եկամտահարկի մասին» ԼՂՅ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթները, որոնց համաձայն՝ ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս, վերջիններին՝ օրենքով սահմանված տվյալների բացակայության դեպքում հասարակական կազմակերպությունների կողմից, որպես հարկային գործակալ, վճարվող եկամտից եկամտահարկը պահվում է 5% դրույթաչափով:

Չ **Հարց.** *Նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված շահութահարկի հաշվարկներում հարկ վճարողի կողմից սխալներ հայտնաբերվելու դեպքում թույլատրվու՞մ է, արդյոք, ներկայացնել ճշտված հաշվարկ:*

Պատասխան. «Շահութահարկի մասին» ԼՂՅ օրենքի համաձայն՝ այն սխալների մասով, որոնք չեն բխում հաշվապահական հաշվառման մեջ տրվող գրանցումներից, հարկ վճարողը կարող է հարկային մարմիններին ներկայացնել ճշտված հաշվարկ, որի հիման վրա օրենքով սահմանված կարգով կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ: Եթե սխալները բխում են հաշվապահական հաշվառման մեջ տրվող գրանցումներից, ապա հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող 3 տարիներին պակաս (ավել) ցույց տրված եկամուտը և/կամ ավել (պակաս) ցույց տրված նվազեցումը (ծախս, կորուստ, այլ նվազեցում) ներառվում են հայտնաբերման տարվա շահութահարկի հաշվարկում: Ընդ որում՝ տվյալ պարագայում հարկ վճարողը մինչև

հարկային մարմինների ստուգումների սկսվելը հաշվապահական հաշվառման մեջ կատարում է համապատասխան գրանցումներ և այդ մասին գրավոր տեղեկացնում հաշվառման վայրի հարկային մարմնին:

Չ **Հարց.** *Համաձայն վարձատուի և վարձակալի միջև կնքված վարձակալական պայմանագրի՝ վարձակալի կողմից վարձակալական վճարը ենթակա է վճարման վեց ամիսը մեկ անգամ: Տվյալ պարագայում վարձատուի մոտ ե՞րբ է առաջաճանաչու ԱԱՀ-ի հաշվարկման պարտավորությունը:*

Պատասխան. «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՅ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարողների կողմից հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման դեպքում ծառայությունների մատուցման, ինչպես նաև դրա հետ կապված հարկային պարտավորության (ԱԱՀ-ի հաշվարկման) ծագման պահ է համարվում, երբ ծառայությունները մատուցվում են պատվիրատուներին: Վարձակալության պայմանագրի պարագայում հարկման առումով ծառայությունը մատուցված համարելու պահ է համարվում, երբ գործարար շրջանակներում ընդունված սովորույթներին համապատասխան, համարվում է ծառայությունը մատուցված համարելու պահ: Մասնավորապես, Զաղաքացիական օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն, գործարար շրջանառության սովորույթ է համարվում ձեռնարկատիրական գործունեության որևէ բնագավառում ձևավորված և լայնորեն կիրառվող օրենսդրությամբ չնախատեսված վարքագծի կանոնը, անկախ դրա՝ որևէ փաստաթղթում ամրագրման հանգամանքից:

Չ **Հարց.** *ԱԱՀ վճարող կազմակերպությունը կառուցում է հասարակական և արտադրական նշանակության շինություն, որում միաժամանակ կիրականացվեն ԱԱՀ-ով և հաստատագրված վճարներով հարկվող գործունեություններ: Տվյալ պարագայում կազմակերպությունը իրավունք ունի՞, արդյոք, կատարել ԱԱՀ-ի հաշվանցումներ (պահպանված են «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքով սահմանված պահանջները):*

Պատասխան. Կազմակերպությունը այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ ձեռք է բերել հաշվանցման իրավունք, կատարում է ԱԱՀ-ի հաշվանցում: Սակայն հաստատագրված վճարով հարկվող գործունեության ծավալման առաջին հաշվետու ժամանակաշրջանում հաստատագրված վճարով հարկվող գործունեության համար առանձնացված տարածքին համամասնորեն կատարվում է ԱԱՀ-ի վերաձևակերպում: ☑



ՆԻՍՓՐ ԹԵԺ ՇՓՈՒՄ

ԹԵԺ ԳԻԾ

**Վստահություն
Հրատապություն
Հետևողականություն**

(+374 47) 948-620



*«Անբարեխիղճ տնտեսվարողներն ամենից
առաջ բարեխիղճ հարկատուներին են վնասում», -
հայտարարում է օպերատիվ հետախուզության վարչության
պետ Իգոր Գրիգորյանը:*



-Պարոն Գրիգորյան, հարկային ծառայության օպերատիվ հետախուզության վարչության գործառնություններն իրենց բնույթով տարբերվում են մյուս ստորաբաժանումների աշխատանքից: Որո՞նք են և ի՞նչ սկզբունքով են ընտրվում հիմնական ուղղությունները:

- Յուրահատկությունը հենց տնտեսական, ավելի կոնկրետ՝ հարկային համակարգում աշխատելն է: Բնականա-

տակով համագործակցում ենք նաև այլ կառույցների հետ:

Տարվում են համապատասխան բացատրական աշխատանքներ: Եվ միայն դրանից հետո, անհրաժեշտության դեպքում, լինում է նաև մեր՝ արդեն ուղղակի միջամտությունը:

-Նշված ուղղություններով ի՞նչ ցուցանիշներ են արձանագրվել 2010-ին:

Մեր աշխատանքների մեծ մասն ուղղված է ստվերի կրճատմանը: Այս առումով եթե խոսենք, օրինակ, ապօրինի ձեռնարկատիրության մասին, ապա 2010-ին նմանատիպ 11 դեպք է արձանագրվել: Անցած տարվա ընթացքում ի հայտ են բերվել նաև սկզբիցային դրոշմանիշով դրոշմավորման ենթակա, բայց չդրոշմավորված (կամ կառավարության կողմից արդեն արգելված թվագրումով դրոշմանիշով դրոշ-

Ե՛Վ ՓՈՔՐԵՐԸ, Ե՛Վ ԽՈՇՈՐՆԵՐԸ ՕՊԵՐԱՏԻՎԻ ԹԻՐԱԽՈՒՄ ԵՆ. ՆՇԱՆԱԿԵՏՆ ՕՐԻՆԱԿԱԽՏՆԵՐՆ ԵՆ

բար, այստեղ պետք է հաշվի առնենք այս ոլորտի նրբությունները. օպերատիվ հետախուզության աշխատանքն ավելի նեղ բնույթ է ստանում՝ ի հայտ բերել չարաշահումները և պայքարել դրանց դեմ՝ հենց տնտեսական դաշտում: Ի տարբերություն մյուսների՝ մեր աշխատանքը հստակ պլանավորված չէ: Իհարկե, կան նաև պլանային աշխատանքներ, բայց հաճախ ստիպված ենք գործել ըստ իրավիճակի: Մեր աշխատանքները կազմակերպվում են հարկային օրենսդրության խախտումների կանխման ու բացահայտման, հակաիրավական գործունեություն իրականացնող սուբյեկտների վերաբերյալ օպերատիվ տեղեկությունների հավաքագրման, վերլուծության և իրացման ուղղություններով:

Հարկ եղած դեպքում, եթե որևէ սուբյեկտի վերաբերյալ հավաքագրված տեղեկությունները նման անհրաժեշտություն են ստեղծում, դիմում ենք կոնկրետ գործողությունների: Այդ առումով մեր ունեցած տեղեկատվությունն օգնում է նաև ծառայության մյուս ստորաբաժանումների աշխատանքներին: Դրանց արդյունավետությունը բարձրացնելու նպա-

- Մենք կարող ենք խոսել միայն ունեցած արդյունքների մասին: Տարվա ընթացքում վարչության կողմից իրականացվել է 126 ստուգում: Դրանց

Տարվա ընթացքում վարչության կողմից իրականացվել է 126 ստուգում: Դրանց արդյունքում լրացուցիչ բյուջե են հաշվարկվել 330 մլն 227 հազար դրամ հարկային և պարտադիր այլ վճարների պարտավորություններ:

արդյունքում լրացուցիչ բյուջե են հաշվարկվել 330 մլն 227 հազար դրամ հարկային և պարտադիր այլ վճարների պարտավորություններ: Դրա հիմնական մասը՝ 302 մլն 746 հազար դրամը, ապահովվել է բյուջեների հանդեպ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման և վճարման ճշտության 25 ստուգումներով:

մավորված) ապրանքների իրացման, սպիրտային խմիչքներն օրենսդրությամբ սահմանված նվազագույն գներից էժան վաճառելու դեպքեր:

Մեծ ուշադրություն է դարձվել նաև փաստաթղթավորման պահանջների պահպանմանը: Հավաքագրված օպերատիվ տեղեկությունների հիման վրա մեր վարչության աշխատակիցներն առևտրի ոլորտում 24 ստուգում են իրականացրել:

-Փաստաթղթավորման ոլորտում դրական տեղաշարժ նկատվո՞ւմ է:

-Այստեղ խնդիրներ դեռ շատ կան: Փաստաթղթավորման պահանջների պահպանումը զգալի չափով կնպաստի ստվերի կրճատմանը: Այդ ուղղությամբ 2010-ին որոշակի աշխատանքներ տարվեցին, սակայն ցանկալի արդյունքի դեռևս չենք հասել: Այնպես որ, այս տարի էլ այդ ոլորտում անելիքը շատ է:

-Պարոն Գրիգորյան, տեսակետ կա, թե հարկային ծառայողների, առավել ևս՝ օպերատիվ հետախուզության վարչության տեսադաշտում հիմնականում փոքր կազմակերպություններն են:



-Որպեսզի իրական պատկերն ավելի պարզ լինի, պետք է խոսենք թվերով. ստուգումների արդյունքում 6 տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ հարուցված քրեական գործերով պարտավորությունները 305մլն դրամից ավելի են կազմել կամ ընդհանուրի շուրջ 92 տոկոսը: Կարծում եմ՝ այդ տվյալներն արդեն իսկ խոսուն են: Իհարկե, փոքր բիզնեսն էլ մեր ուշադրությունից դուրս չի մնում: Ի վերջո, ստուգումների կամ այցելությունների ժամանակ մենք հաշվի ենք առնում նրա գործունեության մեջ մեր կողմից նկատված ռիսկային գործոնները:

-Վարչության՝ 2010-ի գործունեության մեջ հատկապես ի՞նչը կառանձնացնեն:

Ստուգումների արդյունքում 6 տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ հարուցված քրեական գործերով պարտավորությունները 305մլն դրամից ավելի են կազմել կամ ընդհանուրի շուրջ 92 տոկոսը:

- 2010թ.-ին ԼՂՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով 3 փաստի առթիվ նյութեր են նախապատրաստվել: Իսկ ծառայության քննչական բաժնում քննվող երկու քրեական գործերով կայացված

որոշումների համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի օպերատիվ հետախուզության վարչության հետ ձեռնարկված միջոցառումների արդյունքում երևանում հայտնաբերվել են և ԼՂՀ քրեակատարողական վարչության քննչական մեկուսարան ներկայացվել գործով մեղադրվող և հետախուզման մեջ գտնվող անձինք:

Ինչո՞ւ եմ առանձնացնում սա. հանցագործությունը հանցագործություն է՝ անկախ նրանից, թե որ ուղորտում է այն իրականացվում: Բոլոր դեպքերում, հանցագործները պետք է պատժվեն:

ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ

ՀԱՏԿԱՊԵՍ

ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

Հոկտյա

	II	III	IV	V	VI	VII
				1	2	3
4	5	6	7	8	9	10
11	12	13	14	15	16	17
18	19	20	21	22	23	24
25	26	27	28	29	30	31

բոլոր մանրամասներն այստեղ՝

www.tax.nk.am

ԳԵՐԱԿԱՏԱՐՈՒՄՆԵՐ՝ ԲՈԼՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Պետբյուջեի 66.8 տոկոսն ապահովվել է հարկային եկամուտների հաշվին

Հարկային եկամուտներ

Այս տարվա առաջին եռամսյակի՝ ԼՂՀ պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են շուրջ 3220175.9 հազ. դրամ՝ 8.1%-ով ավել ծրագրված մուտքերից: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի հարկային եկամուտներն աճել են 364055.9 հազ. դրամով կամ 12.7%-ով: Հարկային եկամուտների հաշվին է ապահովվել պետական բյուջեի եկամուտների 66.8%-ը: Գերակատարվել են պետական բյուջեի հարկային եկամուտների բոլոր եկամտատեսակների պլանային առաջադրանքները:

2011 թվականի առաջին եռամսյակի կտրվածքով ավելացված արժեքի հարկի գծով պետական բյուջեի մուտքերը կազմել են 1638630.3 հազ. դրամ՝ ապահովվել

լով հարկային եկամուտների 50.9%-ը և ընդհանուր բյուջետային եկամուտների 34%-ը. պլանավորված ցուցանիշը կատարվել է 107.3%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համե-

2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի հարկային եկամուտներն աճել են 364055.9 հազ. դրամով կամ 12.7%-ով:

մատ ԱԱՀ-ի գծով ԼՂՀ պետական բյուջեի մուտքերն աճել են 167387.7 հազ. դրամի չափով կամ 11.4%-ով: Պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում ԱԱՀ-ից հետո իր կշռով երկրորդ հարկատեսակը եկամտահարկն


է: Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել են 409638.6 հազ. դրամի մուտքեր՝ կազմելով պետական բյուջեի հարկային եկամուտների 12.7%-ը և ընդհանուր եկամուտների 8.5%-ը. պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 8738.6 հազ. դրամով կամ 2.2%-ով: 2010թ. առաջին եռամսյակի համեմատ եկամտահարկի գծով պետական բյուջեի մուտքերն աճել են 7.1%-ով կամ 27076.6 հազ. դրամով:


Շահութահարկի գծով պետական բյուջեի եկամուտները հունվար-մարտ ամիսներին կազմել են 284821.9 հազ. դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 8.8%-ը և ընդհանուր եկամուտների 5.9%-ը, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 2.5%-ով կամ ավել 6921.9 հազ. դրամով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերն ավելացել են 51136.4 հազ. դրամով կամ 21.9%-ով:

Պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում ակցիզային հարկի հաշվին ապահովվել են 53824.0 հազ. դրամի մուտքեր՝ կազմելով պետական բյուջեի հարկային եկամուտների 1.7%-ը և ընդհանուր բյուջետային եկամուտների 1.1%-ը, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 3824.0 հազ. դրամով կամ 7.6%-ով, իսկ նախորդ տարվա ցուցանիշը՝ 67.9%-ով կամ 21768.4 հազ. դրամով:

Հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե մուտքագրված հաս-

ՊԵՏԲՅՈՒՋԵԻ 66.8 ՏՈԿՈՍՆ ԱՊԱՀՈՎՎԵԼ Է ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՄՆԵՐԻ ՀԱԾՎԻՆ





տատագրված վճարների գումարը կազմել է 112545.8 հազ. դրամ՝ ապահովելով պետական բյուջեի հարկային եկամուտների 3.5%-ը, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 37.1%-ով կամ 30455.8 հազ. դրամով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հաստատագրված վճարների գծով մուտքերը նվազել են 1943.7 հազ. դրամով կամ 1.7%-ով:

Հունվար-մարտ ամիսներին պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտների 10.9%-ն ապահովվել է առևտրի հարկի հաշվին: Այս հարկատեսակի գծով մուտքերը կազմել են 352541.6 հազ. դրամ՝ 19.9%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը 17.2%-ով կամ 51641.6 հազ. դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի պլանավորված ցուցանիշը:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով նշված ժամանակահատվածում պետբյուջե է մուտքագրվել 146656.4 հազ. դրամ. պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 1.1%-ով: 2010թ. առաջին եռամսյակի համեմատ վճարի գծով պետական բյուջեի մուտքերն աճել են 17422.7 հազ. դրամի չափով կամ 13.5%-ով: Ավտոճանապարհների շինարարության և Նորոգման համար կատարվող մասհա-

նունների մուտքերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 111113.1 հազ. դրամ, նախատեսված ցուցանիշը գերակատարվել է 11073.1 հազ. դրամով կամ 11.1%-ով: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ մասհանունների գծով մուտքերն աճել են 1.1%-ով կամ 1158.8 հազ. դրամով:

Պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում ԱԱՀ-ից հետո իր կշռով երկրորդ հարկատեսակը եկամտահարկն է: Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է 409638.6 հազ. դրամի մուտքեր՝ կազմելով պետական բյուջեի հարկային եկամուտների 12.7%-ը և ընդհանուր եկամուտների 8.5%-ը. պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 8738.6 հազ. դրամով:

Այլ հարկային եկամուտների գծով այս տարվա առաջին եռամսյակի մուտքերը կազմել են 21145.6 հազ. դրամ, ինչը ծրագրված ցուցանիշը գերազանցել է

7225.6 հազ. դրամով կամ 51.9%-ով: Նախորդ տարվա համեմատ այլ հարկային եկամուտների գծով մուտքերը նվազել են 18.8%-ով կամ 4889.2 հազ. դրամի չափով:

Ռոյալթիի գծով պետական բյուջեի՝ առաջին եռամսյակի եկամուտները կազմել են 73838.8 հազ. դրամ, ծրագրված ցուցանիշը կատարվել է 110.8%-ով կամ ավել 7174.8 հազ. դրամի չափով: Նախորդ տարվա համեմատ ռոյալթիի գծով մուտքերն աճել են 32.2%-ով:

Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով ԼՂՀ պետական բյուջեի եկամուտները 2011 թվականի առաջին եռամսյակում կազմել են 15419.9 հազ. դրամ կամ ծրագրված ցուցանիշը գերակատարվել է 0.5%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ՝ շուրջ 2.2 անգամ:

Պետական տուրք

Պետական տուրքի գծով 2011 թվականի առաջին եռամսյակի բյուջեի մուտքերը կազմել են 79776.8 հազ. դրամ՝ ապահովելով պետական բյուջեի եկամուտների 1.7%-ը: Պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 8776.8 հազ. դրամով կամ 12.4%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական տուրքի գծով պետական բյուջեի մուտքերն աճել են 19.6%-ով կամ 13089.0 հազ. դրամով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ԼՂՀ պետական բյուջեի՝ 2011 թվականի առաջին եռամսյակի մուտքերը կազմել են 1287064.7 հազ. դրամ. ծրագրված ցուցանիշը կատարվել է 102.9%-ով՝ ավել 36314.7 հազ. դրամով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ վճարի գծով մուտքերն աճել են 7.8%-ով կամ 93191.0 հազ. դրամով: ☑

tax

ՌԵՊՈՐՏԱԺ

Չարկային համակարգ

խոշոր բիզնես

ՄՐՅԱԴԱՇՏՈՒՄ ԽՈՇՈՐՆԵՐՆ ԵՆ.

Ո՛Վ ԿՅԱՅՏՆՎԻ ԽՈՇՈՐ ԶԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՏՎԱԿՈՐ ՑԱՆԿՈՒՄ



«Չայտնվել առաջատարների շարքում, նշանակում է՝ լինել հասարակության և իշխանության ուշադրության կենտրոնում, ճանաչվել որպես բարեխիղճ»

Չարցագրույց ՉՊԾ խոշոր հարկ վճարողների վարչության պետի պաշտոնակատար Արմեն Գրիգորյանի հետ:

-Պարոն Գրիգորյան, ի՞նչ արդյունքներով էր վարչությունն ամփոփել 2010-ը:

-Նախորդ տարի հանրապետության միայն 100 խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է 13.1 մլրդ դրամ՝ հարկերի, տուրքերի եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասով: Որպեսզի ավելի պարզ լինի, թե ինչ ծավալների մասին է խոսքը, նշեմ, որ դա կազմել է պետբյուջեի հարկային եկամուտների, պետական տուրքերի եւ պարտադիր սոցվճարների ընդհանուր մուտքերի 60.8 տոկոսը:

-Իսկ դիւմիկան ինչպիսի՞ն է: Տարեցտարի աճո՞ւմ է, թե՞ նվազում խոշոր հարկ վճարողների չափաբաժինը հարկային մուտքերի ընդհանուր կառուցվածքում:

-Դրական տեղաշարժն ակնհայտ է: Բավական է միայն նշել, որ եթե 2009-ին խոշոր հարկատուներն ապահովել էին այդ տարվա հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցվճարների ընդհանուր մուտքերի 66 տոկոսը, ապա 2010 թվականին այդ ցուցանիշը հատել է 68 տոկոսի սահմանագիծը:

-Ի՞նչ ցուցանիշներով է այս կամ այն կազմակերպությունը դասվում խոշոր հարկ վճարողների շարքը:

- Խոշոր հարկ վճարող դասակարգվելու համար հիմք են հանդիսանում իրացումից ստացված հասույթի, հաշվեգրված հարկերի, ակտիվների հաշվեկշռային արժեքի և աշխատակիցների միջին թվաքանակի ցուցանիշների մեծությունը: Բացի այդ, կարող են հաշվի առնվել նաև այլ չա-

փանիշներ՝ նպատակ ունենալով ապահովել սպասարկման և հսկողության միասնական ու պատշաճ մակարդակ՝ որոշակի առանձնահատուկ դեպքերում և պայմաններում: Խոշոր հարկ վճարողների վարչությունում հաշվառման ենք վերցնում նաև այն կազմակերպություններին, որոնք իրականացրել են բիզնեսի բաժանում, ինչի հետևանքով էլ դուրս են մնացել ցանկից:

Հանրապետությունում խոշոր հարկատուների թիվը հաստատուն լինել է կարող և կարող է փոփոխությունների ենթարկվել:

-Կազմակերպության համար խոշոր հարկատու լինելու կարգավիճակը ենթադրո՞ւմ է լրացուցիչ առավելություններ, պարտավորություններ:

-Հայտնվել առաջատարների շարքում, նշանակում է՝ լինել հասարակության և իշխանության ուշադրության կենտրոնում, ճանաչվել որպես բարեխիղճ, հետևաբար այս առումով մրցակցություն կա հարկ վճարողների միջև:

-Յուրաքանչյուր ոլորտ իր առանձնահատկություններն ունի: Իսկ Ձեր ղեկավարած վարչության աշխատանքն ինչո՞վ է առանձնանում: Խոշոր հարկ վճարողների հետ աշխատելը հե՞շտ է:

-Խոշոր հարկատուների հետ աշխատելը հեշտ է այն առումով, որ այդ կազմակերպություններում աշխատում են հիմնականում փորձառու, բանիմաց հաշվապահներ: Այնպես որ, զուտ մասնագիտական առումով դժվարություններ գրեթե չենք ունենում: Մյուս կողմից, քանի որ խոսքը խոշոր գումարների մա-

խոշոր հարկ վճարողների վարչությունում գրանցված կազմակերպությունների թիվն աճում է: Այսպես, եթե 2009-ին գրանցված էր 242 հարկատու, ապա 2010-ի տվյալներով այդ թիվն աճել է 17-ով և այսօր մեր հանրապետությունում ունենք արդեն 259 խոշոր հարկ վճարող:

Եթե 2009-ին խոշոր հարկատուներն ապահովել էին հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցվճարների ընդհանուր մուտքերի 66 տոկոսը, ապա 2010 թվականին այդ ցուցանիշը հատել է 68 տոկոսի սահմանագիծը:

Հայտնվել առաջատարների շարքում, նշանակում է՝ լինել հասարակության և իշխանության ուշադրության կենտրոնում, ճանաչվել որպես բարեխիղճ, հետևաբար այս առումով մրցակցություն կա հարկ վճարողների միջև:

Խոշոր հարկ վճարող դասակարգվելու համար հիմք են հանդիսանում իրացումից ստացված հասույթի, հաշվեգրված հարկերի, ակտիվների հաշվեկշռային արժեքի և աշխատակիցների միջին թվաքանակի ցուցանիշների մեծությունը:

Միայն 100 խոշոր հարկ վճարողների կողմից 2010-ին վճարվել է 13.1 մլրդ դրամ՝ հարկերի, տուրքերի եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասով:

Այս տարվա առաջին եռամսյակի արդյունքներով՝ պատկերը մի փոքր այլ է: Առաջին 3 հարկատուներն իրենց տեղերում անփոփոխ են մնացել: Իսկ ահա 4-րդ հորիզոնականը գրավել է «Արցախներգո» ՓԲԸ-ն է, իսկ «Արցախբանկ»-ն էլ տեղավորվել է հինգերորդ տեղում:



ԱՇԽԱՐՀԻ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԸ՝ ԸՍՏ Forbes-ի

Ամերիկյան Forbes հեղինակավոր հանդեսը հրապարակել է աշխարհի 2000 խոշորագույն ընկերությունների ցանկը: Ընկերությունների ընտրության ժամանակ հաշվի է առնվել չորս ցուցանիշ՝ շահույթը, ակտիվները, կապիտալիզացիան և վաճառքների ծավալը: Վարկանշային աղյուսակում առաջին տեղը զբաղեցնում է ամերիկյան JPMorgan Chase բանկը, երկրորդ հորիզոնականում բրիտանական HSBC բանկն է, երրորդը՝ ամերիկյան General Electric կորպորացիան: Ընկերությունների ամբողջական ցանկը հրապարակվել է պարբերականի կայքէջում՝ www.forbes.com-ում:

Ամենաշահութաբեր ընկերությունների առաջին հորիզոնականը զբաղեցրել է շվեյցարական Nestle ընկերությունը՝ \$36,65 մլրդ շահույթով, երկրորդ հորիզոնականում ամերիկյան ExxonMobil

նավթագազային ընկերությունն է՝ \$30,46 մլրդ շահույթով: Ռուսական «Գազպրոմ»-ը երրորդ տեղում է, իսկ ընդհանուր ցուցակում՝ 15-րդը: Ըստ Forbes-ի՝ 2010թ. «Գազպրոմ»-ի շահույթը կազմել է \$25,72 մլրդ:

ExxonMobil-ը կապիտալիզացիայի ցուցանիշով առաջին տեղն է զբաղեցրել՝ \$407,2 մլրդ: Նրան հաջորդում է ամերիկյան Apple կորպորացիան՝ \$324,3 մլրդ, իսկ երրորդ տեղը զբաղեցնում է չինական PetroChina նավթագազային կոնցեռնը՝ \$320,8 մլրդ:

Վարկանշային աղյուսակում ընկերությունների թվով առաջին տեղում ԱՄՆ-ն է՝ 536 ընկերություն, երկրորդ հորիզոնականում Ճապոնիան է՝ 260 ընկերություն: Լավագույն հնգյակը եզրափակում են Չինաստանը՝ 121 ընկերություն, Կանադան՝ 67, Հարավային Կորեան՝ 61 ընկերություն:

սին է, հետևապես այստեղ ցանկացած շեղում շատ ավելի զգալի հետևանքներ կարող է թողնել ընդհանուր արդյունքների վրա:

- Հասարակության մեջ մի համոզմունք է ձևավորվել, թե խոշոր կազմակերպությունը կարողանում է խուսափել հարկերից: Ձեր դիտարկմամբ, իրականում դա հնարավոր է:


- Իրականում խոշոր հարկատուների նկատմամբ ուշադրությունն ավելի մեծ է, հետևաբար, նրանց կողմից խախտումների հավանականությունն ավելի է փոքրանում: Արձանագրված խախտումների դեպքում էլ գործում ենք օրենսդրությամբ սահմանված կարգով:

- Վերլուծելով խոշորների ցանկը՝ ի՞նչ եզրահանգման ենք գալիս. այն աճո՞ւմ է, թե՞ նվազում:

- Ի ուրախություն մեզ, պետք է փաստենք, որ խոշոր հարկ վճարողների վարչությունում գրանցված կազմակերպությունների թիվն աճում է: Այսպես, եթե 2009-ին գրանցված էր 242 հարկատու, ապա 2010-ի տվյալներով այդ թիվն աճել է 17-ով և այսօր մեր հանրապետությունում ունենք արդեն 259 խոշոր հարկ վճարող:

- Ովքե՞ր են գլխավորում խոշորների հնգյակը, և այդ առումով ի՞նչ կանխատեսումներ կան այս տարվա համար:

- 2010-ի արդյունքներով՝ անվիճելի առաջատարը եղել և մնում է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ն, որին հաջորդում են «Ղարաբաղ Տելեկոմ»-ը, «Արցախգազ»-ը, «Արցախբանկ»-ը: Առաջատարների հնգյակը եզրափակել է «Կապավոր» ՍՊԸ-ն:

Այս տարվա առաջին եռամսյակի արդյունքներով՝ պատկերը մի փոքր այլ է: Առաջին 3 հարկատուներն իրենց տեղերում անփոփոխ են մնացել: Իսկ ահա 4-րդ հորիզոնականը գրավել է «Արցախեներգո» ՓԲԸ-ն է, իսկ «Արցախբանկ»-ն էլ տեղավորվել է հինգերորդ տեղում: 

ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ

ՀԱՏԿԱՊԵՍ

ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

Օգոստոս

I	II	III	IV	V	VI	VII
1	2	3	4	5	6	7
8	9	10	11	12	13	14
15	16	17	18	19	20	21
22	23	24	25	26	27	28
29	30	31				

բոլոր մանրամասներն այստեղ՝

www.tax.nk.am

«Փոքր բիզնեսը պետք է զգա, որ պետության ուշադրության կենտրոնում է. առաջին՝ օրենսդրական քայլերն արված են»,-

հայտարարում է ԼՂՀ ԿԱ ՀՊԾ մեթոդաբանության և հարկային վարչարարության բարեփոխումների բաժնի պետ Արմինե Մուսայելյանը





ՆՈՐ ՀԱՅԱՅՔ՝ ՓՈՔՐ ԲԻԶՆԵՍԻՆ

Առաջին՝ օրենսդրական քայլերն արված են

Հարկային ծառայության կողմից վերջին մի քանի տարիների ընթացքում նախաձեռնվել են չորս տասնյակից ավելի օրենսդրական բարեփոխումներ, որոնք հիմնականում միտված են հարկային վարչարարության պարզեցմանն ու բարելավմանը, փոքր ձեռնարկատիրության համար փաստաթղթաշրջանառության կրճատմանը, միաժամանակ նաև՝ կարգազանց հարկ վճարողների նկատմամբ խիստ պատասխանատվության միջոցների սահմանմանը, հարկումից խուսափելու սողանքների վերացմանը: Փոքր և միջին ձեռնարկատիրության ծավալման և, առհասարակ, գործարարության համար բարենպաստ միջավայրի ապահովմանը զուգահեռ՝ օրակարգում է նաև տեղական արտադրության խթանման հարցը:

- Տիկին Սուսայեյան, հարկային ոլորտում վերջին տարիներին շուրջ 40 օրենսդրական բարեփոխումներ են իրականացվել: Այդ շարքում հատկապես ո՞ր փոփոխություններն են եական և սկզբունքային:

-Փոփոխությունների առաջին խումբը միտված է փոքր ձեռնարկատիրական գործունեության համար փաստաթղթաշրջանառության բեռի թեթևացմանը, պարզեցմանը: Այդ առումով հարկային մարմնի կողմից 2009-ին նախաձեռնվեց օրենսդրական փոփոխություն, որի համաձայն մինչև 36 միլիոն դրամ իրացման շրջանառություն ունեցող, վարձու աշխատանք չօգտագործող և լիցենզավորման ենթակա գործունեություն չիրականացնող անհատ ձեռնարկատերերի համար կրճատվեցին հարկային մարմիններ հաշվարկ-հաշվետվությունների և այլ տեղեկությունների ներկայացման պարբերականությունը: Արդյունքում հարկ վճարողների 25 տոկոսից ավելին հաշվարկ-հաշվետվությունները և այլ տեղեկություններն այժմ ներկայացնում են կիսամյակային պարբերականությամբ՝ ամսական կամ եռամսյակային պարբերականության փոխարեն:

Վերանայվել է նաև հարկային մարմիններ կայացվող ֆինանսական հաշվետվությունների ցանկը՝ սահմանափակելով այն հաշվապահական հաշվեկշռով և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությամբ: Միասնականացվել

մեղմացման և, դրանով իսկ, հարկային բեռի նվազեցման միտում ունի՝ պայմանավորված տնտեսության գերակշիռ ոլորտներում վճարումների անկատար մեխանիզմներով:

Շահութահարկի 5% դրույքաչափով հարկվող գործունեությունների մասով հարկային վնասն ավել ցույց տալու համար նախատեսված 20% տուգանքի չափը նվազեցվել է՝ սահմանելով 10%, ինչը հաշվեկշռվում է շահութահարկի գործող դրույքաչափի հետ:

Հարկերի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու համար նվազեցվել է տույժերի հաշվարկման համակարգը՝ սահմանելով տարբերակված դրույքաչափեր, ինչը վարչարարության մեղմացման և, դրանով իսկ, հարկային բեռի նվազեցման միտում ունի:

Փոփոխությունների առաջին խումբը միտված է փոքր ձեռնարկատիրական գործունեության համար փաստաթղթաշրջանառության բեռի թեթևացմանը, պարզեցմանը:

են մի շարք հարկատեսակների հաշվարկման և վճարման ժամկետները:

2008 թվականի հունվարի 1-ից հարկերի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու համար նվազեցվել է տույժերի հաշվարկման համակարգը՝ սահմանելով տարբերակված դրույքաչափեր, ինչը վարչարարության

վարչարարության պարզեցման նպատակ է հետապնդում որպես հիմնավորված փաստաթղթեր հսկիչ-դրամարկային մեքենաների կտրոնների և կրճատ հաշիվ ապրանքագրերի սահմանումը:

Փոփոխությունների մյուս մասն էլ պարունակում է հարկման նոր մոտեցումներ, սկզբունքներ և ենթադրում է հարկային օրենսդրության մեջ հարկային մարմինների և հարկ վճարողների համար հաշ-

վաճման տեսանկյունից առկա բարդեցված դրույթների հստակեցում, պարզեցում, հարկային լծակներով տնտեսվարման հավասար պայմանների ապահովում, ինչպես նաև անբարեխիղճ հարկ վճարողների նկատմամբ հարկային վարչարարության արդյունավետության բարձրացում:

Ապրանքների ստվերային շրջանառությունը կանխելու գործում Էսկան Նշանակություն ունեցավ 2009թ.-ի հուլիսի 1-ից «Չարկերի մասին» օրենքում կատարված փոփոխությունը, որով նախատեսվեց տուգանք՝ գործարքի ամբողջ արժեքի 20 տոկոսի չափով՝ ինչպես հաշվարկային փաստաթուղթ չտրամադրող, այնպես էլ դրանք չպահանջող գործարքի կողմերի նկատմամբ: Արդյունքում այսօր զգալիորեն կրճատվել են առանց փաստաթղթերի իրականացվող գործարքները:

Այս տարեսկզբից «Չարկերի մասին» օրենքում կատարված փոփոխությամբ կանոնակարգվել է երրորդ անձանցից տեղեկությունների ստացման գործընթացը: Մինչ այդ օրենքով սահմանված չէր «երրորդ անձ» հասկացությունը, կարգավորված չէր նրանցից ստացվող տեղեկությունների իրացումը, որն էլ հաճախ հարկային մարմնի կողմից օրենքով սահմանված որոշ դրույթները կիրառելու համար լուրջ բարդություններ էր առաջացնում: Այս փոփոխությունից բխող կառավարության մի շարք որոշումների նախագծեր են այժմ մշակվում, և դրույթի լիարժեք գործողության արդյունքում հնարավորություն կստեղծվի բարձրացնել հարկ վճարողների կողմից պետության նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողության արդյունավետությունը:

2009-ին՝ որպես առանձին հսկողական գործիք, ստուգումների օրենքով մտցվեց կամերալ ուսումնասիրությունների ինստիտուտը: Ներկայումս

կամերալ ուսումնասիրություններն անկացվում են ընտրանքային: Սակայն դրանց համատարած կիրառումը թույլ կտա բացահայտել հարկերից խուսափելու տեսանկյունից առավել ռիսկային հարկ վճարողներին և հարկային մարմնի ջանքերը կենտրոնացնել

Ուղղակի և անուղղակի հարկերը սահմանող օրենսդրությամբ գյուղատնտեսական արտադրանքի հարկից ազատման արտոնությունը միտված է ԼՂՀ տնտեսության համար առաջնահերթ նշանակություն ունեցող ճյուղի զարգացմանը:

Չարկային ընթացակարգերի հաճախակի փոփոխություններն առաջին հայացքից կարող են հանգեցնել անկայուն վիճակի:

Սակայն, եթե տվյալ փոփոխությունն էապես բարելավում է ձեռներեցության զարգացման պայմանները կամ պայմանավորված է պետական շահերի պաշտպանության անհետաձգելիությամբ, համարվում է օրինաչափ երևույթ:

Մասնավորապես, բարձրագույն ուսումնական հաստատությունները երկու տարի ժամկետով ազատվեցին հաստատությունում սովորող՝ զոհված զինծառայողների այրիների ու երեխաների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, առաջին, երկրորդ խմբերի և մանկուց հաշմանդամների, արցախյան պատերազմի առաջին խմբի հաշմանդամների երեխաների ուսման վարձերի գեղջման կամ ներման մասով առաջացած շահութահարկի և ավտոճանապարհային մասհանումների վճարումից:

Կարևորվում է նաև 2009-ի հունվարի 1-ից մինչև 2013 թվականը ԼՂՀ տարածքում բնակարանային շինարարության ոլորտն ավելացված արժեքի հարկից ազատումը, ինչը նպաստում է ոլորտում ներդրումների իրականացմանն ու զարգացմանը: Գյուղատնտեսության բնագավառում էլ գործող ԱԱՀ-ի արտոնության ժամկետը երկարաձգվել է մինչև 2014 թվականը և այլն:

Չարկման այլընտրանքային համակարգերից առավել արդարացի՝ արժեքային համակարգին անցման նկատառումով առևտրի իրականացման վայրերի, բենզինի և դիզելային վառելիքի, լուսանկարչական լաբորատորիաների գործունեությունների համար սահմանված հարկման հաստատագրված վճարների համակարգը փոխարինվել է հարկման ընդհանուր համակարգով:

- Իսկ տեղական արտադրության զարգացման համար առհասարակ ի՞նչ արտոնություններ են գործում:

- Պետք է նշեմ, որ դրույքաչափերի առումով ԼՂՀ-ում գործող հարկային դաշտը ձեռնարկատիրության զարգացման համար արդեն իսկ նպաստավոր է: Բավական է նշեմ, որ շահութահարկի դրույքաչափը կազմում է 5% (բացառությամբ վարկային կազմակերպությունների, բանկերի, ապահովագրական ընկերությունների, գրավատների, արտարժույթի առք ու վաճառքի և արտարժույթի դի-

Taxes



հենց նրանց համակարգը բարձրացնելու հարկերի՝ կաբարեխիղճը վճարում:

Այդ կոչված է նաև լու հարկ վճարումը և հարկերը և քա գի ծը՝ հետագայում խուսափելով տուգանքներից:

2009-ին հարկային դաշտում իրականացվեցին նաև մի շարք հակաճնաժամային փոփոխություններ:



լերային-բրոքերային առք ու վաճառքի գործունեությունն իրականացնողների): Սակայն օրենսդրությամբ կան նաև առանձին արտոնություններ: Այսպես, ուղղակի և անուղղակի հարկերը սահմանող օրենսդրությամբ գյուղատնտեսական արտադրանքի հարկից ազատման արտոնությունը միտված է ԼՂՀ տնտեսության համար առաջնահերթ նշանակություն ունեցող ճյուղի զարգացմանը: Տեղական մի շարք արտադրատեսակների զարգացմանն է միտված նաև գյուղատնտեսական մթերքների ավարտուն տեխնոլոգիական ցիկլ անցնող ապրանքների վերամշակման մասով գործող ԱԱՀ-ից ազատման արտոնությունը: Հայրենական և օտարերկրյա կապիտալի ներգրավմանն է ուղղված կանոնադրական կապիտալում ներդրումներ իրականացնող ռեզիդենտների համար շահութահարկից ազատման ժամկետային արտոնությունը. եթե ռեզիդենտի պետական գրանցման պահին և դրան հաջորդող երեք տարիների ընթացքում կանոնադրական կապիտալում հիմնադրի փաստացի կատարած ներդրման ընդհանուր արժեքը կազմում է առնվազն 100 մլն դրամ, ապա տվյալ ռեզիդենտի շահութահարկի գումարը նվազեցվում է՝ ներդրման պահին հաջորդող առաջին երեք տարիներին 100 տոկոսի չափով, հետագա երկու տարիներին՝ 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան ներդրման ընդհանուր արժեքի 10 տոկոսը:

- Հարկային օրենքներում բավականին հաճախ են փոփոխություններ կատարվում. ինչո՞վ է դա պայմանավորված: Տնտեսվարող սուբյեկտների գործունեության վրա այդ հանգամանքը բացասաբար չի՞ անդրադառնում:

- Իսկապես, գործող պրակտիկան վկայում է, որ հարկային օրենսդրությունում փոփոխություններ կատարվում են, կարելի է ասել, ամեն տարի: Հարկային ընթացակարգերի հաճախակի փոփոխություններն առաջին հայացքից կարող են հանգեցնել անկայուն վիճակի: Սակայն եթե տվյալ փոփոխությունն էապես բարելավում է ձեռներեցության զարգացման պայմանները կամ պայմա-

նավորված էպետական շահերի պաշտպանության անհետաձգելիությամբ, համարվում է օրինաչափ երևույթ: Իսկ մեր պայմաններում փոփոխությունների անհրաժեշտությունն առաջին հերթին թելադրում են գործարարության խթանման հիմնահարցերը:

-Իսկ որքանո՞վ է հաջողվում արդյունավետ և օպերատիվ կազմակերպել հարկատուների իրազեկումը:

Փոփոխությունների մյուս մասն էլ պարունակում է հարկման նոր մոտեցումներ, սկզբունքներ և ենթադրում է հարկային օրենսդրության մեջ հարկային մարմինների և հարկ վճարողների համար հաշվառման տեսանկյունից առկա բարդեցված դրույթների հստակեցում, պարզեցում, հարկային լծակներով տնտեսվարման հավասար պայմանների ապահովում, ինչպես նաև անբարեխիղճ հարկ վճարողների նկատմամբ հարկային վարչարարության արդյունավետության բարձրացում:

-Մեզ համար չափազանց կարևոր է հասարակության գնահատականը, քանի որ հարկատու-հարկային մարմին հարաբերություններում, ի դեմս հարկային մարմնի, պետությունն է հանդես գալիս: Այն մեծապես կարող է կախված լինել հարկային մարմնի վարչարարությունից: Հետևաբար հարկային մարմինները ձգտում են առավելագույնս աջակցել հարկ վճարողներին հարկային օրենսդրության ճիշտ ընկալման և կիրառման գործում, հաղորդակցման տարբեր եղանակներով հանրությանը իրազեկ դարձնել հարկային բարեփոխումների ընթացքին, ինչն իր հերթին կհանգեցնի հանրության կողմից հարկային պետական ծառայության և նրա առաքելության դրական ընկալմանը: Այս առումով հարկ վճարողների հետ պարբերաբար կազմակերպում են սեմինար-խորհրդակցություններ: Ծառայության պետի

հրամանով հաստատվել է հարկ վճարողների հետ հարկային օրենսդրության և դրան համապատասխան իրավական ակտերի կիրառման վերաբերյալ կայանալիք ուսուցում-խորհրդակցությունների այս տարվա ծրագիր-ժամանակացույցը, որով յուրաքանչյուր եռամսյակ նախատեսում ենք անցկացնել հանդիպումներ հարկ վճարողների հետ բոլոր շրջաններում և մայրաքաղաքում: Պարզաբանման աշխատանքներ ենք իրականացնում նաև հարկ վճարողների կողմից անմիջական շփումների միջոցով և այլն:

Իրազեկման բնույթի աշխատանքների որակական նոր ձեռքբերումներով ուզում ենք առանձնացնել 2010 թվականը. հրապարակվեցին հարկ վճարողների կողմից բարձրացված հարցերի, ինչպես նաև վերահսկողության արդյունքում բացահայտված բացթողումների հիմքով կազմված «Խուսափենք հաճախակի կրկնվող սխալներից» ձեռնարկը, հարկային դաշտի վերաբերյալ տեղեկատվական նյութեր պարունակող «Հարկային համառոտագիր» գրքույկը, «Հարկատու» եռամսյակային պարբերականը, որով հանրությանն ենք ներկայացնում հարկային համակարգում տեղի ունեցող օրենսդրական, վարչարարական նորությունները, գործարարի հաջողություններն ու ձախողված բիզնեսի պատճառները, համաշխարհային տնտեսական նորությունները:

Հարկ վճարողներին հարկային օրենքների կիրառման մասին պարզաբանումների տրամադրման մեխանիզմի բարելավման նպատակով այս տարի հունվարի 1-ից լրացումներ են կատարվել «Հարկերի մասին» օրենքում, դրանցից ելնելով՝ առաջիկայում նախատեսում ենք մշակել և կիրառության մեջ դնել հարկերի և պարտադիր այլ վճարների գծով պարզաբանումների տրամադրման ընթացակարգը:

Հարկային օրենսդրության մատչելի մատուցման նպատակով այս տարվա ընթացքում նախատեսում ենք նաև տեղեկատվական տարբեր նյութերի՝ բրոշյուրների, բուկլետների, ձեռնարկների հրատարակում:

ԼՂՀ ՊԵՏԲՅՈՒԶԵՒ ՀԱՐԿԵՐԻ, ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ 64.3 ՏՈԿՈՍՆ ԱՊԱՅՈՎԵԼ ԵՆ 100 ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԸ



2011թ.

առաջին եռամսյակի ընթացքում ԼՂՀ առաջին 100 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների (այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների) գումարը կազմել է 2942.2 մլն դրամ: Դա ԼՂՀ պետբյուջեի՝ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների ընդհանուր մուտքերի 64.3%-ն է: Նկատենք, որ 2010-ի առաջին եռամսյակի ընթացքում 100 խոշոր հարկ վճարողների վճարած հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների (այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների) ընդհանուր գումարը կազմել է շուրջ 2364.5 մլն դրամ, այսինքն՝ ընդհանուր մուտքերի 57.7%-ը:



ԱՌԱՋԱՏԱՐՆ ԱՆՓՈՓՈՆ Է՝ «ԲԵՅՉ ՄԵԹՂԱ»

100 խոշորների ցանկը, ինչպես 2010թ-ի, այնպես էլ այս տարվա առաջին եռամսյակի ընթացքում գլխավորել է «Բեյյո Մեթղա» ՓԲԸ-ն: Այդ ժամանակահատվածներում ընկերության կողմից վճարվել են համապատասխանաբար 851 մլն և 909.2 մլն դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ (այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներ): Բոլոր ցուցանիշները վկայում են, որ թիվ մեկ հարկատուին հաջողվել է այս անգամ ևս լավ արդյունք արձանագրել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Ինչ վերաբերում է առաջին եռյակին, ապա «Բեյյո Մեթղա»-ին հաջորդում են «Ղարաբաղ Տելեկոմ»-ը և «Արցախագազ»-ը: Նշենք նաև, որ նախորդ տարվա համեմատությամբ առաջին եռյակը պահպանել է իր դիրքերը: Երեք խոշոր հարկ վճարողներն այս տարվա առաջին եռամսյակում ԼՂՀ պետբյուջե են փոխանցել 1517.0 մլն դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ (այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներ), այսինքն՝ պետբյուջեի հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների 33.1%-ն ապահովել են 3 խոշորները: 2010թ.-ի առաջին եռամսյակի արդյունքներով այդ ցուցանիշը կազմել է 1438.3 մլն դրամ կամ պետբյուջեի հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների 35.1%-ը:

Ընդհանուր առմամբ, ըստ 100 խոշոր հարկ վճարողների կողմից հայտարարագրված՝ պետական բյուջե հաշվարկված և վճարված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների (այդ թվում պարտադիր սոցիալական ապահովության վճարների) ցուցանիշի մեծությամբ նկատվել է աճի միտում: Հաշվարկված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշը 2010թ.-

ի առաջին եռամսյակում կազմել էր 2591.3 մլն դրամ, իսկ 2011թ.-ի նույն ժամանակահատվածում՝ 3297.9 մլն դրամ: Իսկ վճարված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշն այս տարվա առաջին եռամսյակում, 2010թ.-ի նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 577.7 մլն դրամով կամ 24.4%-ով՝ կազմելով 2942.2 մլն դրամ:

100 խոշորների ցանկը, ինչպես 2010թ.-ի, այնպես էլ այս տարվա առաջին եռամսյակի ընթացքում գլխավորել է «Բեյյո Մեթղա» ՓԲԸ-ն: Այդ ժամանակահատվածներում ընկերության կողմից վճարվել են համապատասխանաբար 851 մլն և 909.2 մլն դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ (այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներ):

100 խոշոր հարկատուների տարեկան վճարած հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների (այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների) տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ 2010թ. և 2011թ. առաջին եռամսյակում ունեցել է հետևյալ պատկերը. եթե 2010թ. այն կազմել է ընդհանուրի 57.7%-ը, ապա այս տարի՝ 64.3%-ը:

100 խոշոր հարկ վճարողների կողմից հայտարարագրված աշխատողների միջին ամսական ցուցակային թվի և աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ցուցանիշների մասով

այս տարվա առաջին եռամսյակի ընթացքում ևս նկատվել է աճի միտում՝ նախորդ տարվա համեմատ: Աշխատողների միջին ամսական ցուցակային թիվը 2010թ.-ին կազմել էր 7974 մարդ, 2011թ.-ին՝ 8148 մարդ, իսկ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ցուցանիշը 2010 և 2011թթ. առաջին եռամսյակների կտրվածքով համապատասխանաբար կազմել է 806 մլն և 910.8 մլն դրամ: Միջին ամսական աշխատավարձը 2010թ.-ի առաջին եռամսյակում կազմել էր 101.1 հազար դրամ, իսկ այս տարի՝ 111.8 հազար դրամ: Առաջին 3 խոշոր հարկ վճարողների մասով աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների միջին ամսական ցուցանիշը 2011թ. առաջին եռամսյակում՝ 2010-ի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 52.2 մլն դրամով՝ կազմելով 374.6 մլն դրամ:

ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԸ՝ ԸՍՏ ԻՐԵՆՑ ԻՐԱՑՄԱՆ ԾԱՎԱԼԻ

2011թ.-ի առաջին եռամսյակում ըստ ծավալի 100 խոշոր հարկ վճարողների ցուցանիշների պատկերը հետևյալն է. եթե հարկ վճարողների կողմից հայտարարագրված իրացման ծավալի ցուցանիշը (առանց ԱԱՀ-ի) անցած տարվա առաջին եռամսյակում շուրջ 19243.7 մլն դրամ էր, ապա 2011թ.-ի նույն ժամանակահատվածում այն կազմել է 23497.2 մլն դրամ: Իսկ դա նշանակում է, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ իրացման ծավալի աճ է արձանագրվել՝ 4253.4 մլն դրամով կամ 22.1%-ով:

Յմլն դրամ և ավելի պարտադիր սոցիալական ապահովության վճար վճարած ապահովադիրները և նրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված պարտադիր սոցիալական ապահովության վճարների մեծությունները

Գ/Գ	ՀՎՀՀ	Ապահովադրի անվանումը	Ապահովադրի գտնվելու վայրը	2011թ. հունվար-մարտ ամիսներին վճարված սոցիալական ապահովության վճարների ընդհանուր գումարը (հազ.դրամ)
1	2	3	4	5
1.	90016169	«Բեյզ մեթըլս» ՓԲԸ	գ.Դրմբոն	80000.0
2.	90015278	«Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	55350.3
3.	90000186	«Արցախէներգո» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	50285.7
4.	90001386	«Արցախբանկ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	48697.8
5.	90025813	«Տեխնոշին» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	15202.3
6.	90010189	«Արցախգազ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	12495.8
7.	90017188	«Պանտ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	11433.2
8.	90071281	«Դորոմիկ» ՍՊԸ	գ.Այգեստան	11000.0
9.	90025315	«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ	ք.Ստեփանակերտ	9485.4
10.	90028063	«Տեխնո Ֆիտ Հիս» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	8891.6
11.	90002165	«Վիրաժ» ԱԿ	ք.Ստեփանակերտ	7440.0
12.	90070057	«Արցախ բրենդի կոմպանի» ՓԲԸ	ք.Ասկերան	6910.8
13.	90212588	«Լուսակերտ» ՍՊԸ	ք.Մարտունի	6446.4
14.	90008771	ԼՂՀ ԱՆ «Հանրապետական հիվանդանոց» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	6005.5
15.	90028183	«Հորիզոն թրեյդ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	6000.0
16.	90141847	ԼՂՀ «Ռ.Հ.Բազիլանի անվ. Մարտակ. շրջ. բուժմիավորում» ՓԲԸ	ք.Մարտակերտ	5420.9
17.	90008901	ԼՂՀ «Հանրային հեռուստառադիոընկերություն» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	5291.0
18.	90008763	ԼՂՀ ԱՆ «Մոր եւ մանկան առողջության պահպանման կենտրոն» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	5051.5
19.	90016787	«Սիզմա գրուպ սերվիս» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4921.7
20.	90211894	ԼՂՀ ԱՆ «Մարտունու շրջանային բուժմիավորում» ՓԲԸ	ք.Մարտունի	4779.4
21.	90002698	«Արցախկապ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4663.1
22.	90028854	«Զրամատակարարում և ջրահեռացում» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4612.4
23.	90025049	«Էռմի» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4546.9
24.	90001833	«Արցախփոստ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4432.3
25.	90008979	ԼՂՀ ԱՆ «Արեւիկ» մանկական բուժմիավորում» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4406.9
26.	90020879	«Փերֆեքթ Սետթինգ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4232.5
27.	90009329	ԼՂՀ ԱՆ «Արմինե Փակումեանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4220.9
28.	90021261	«Արաքս Գրուպ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4134.9
29.	90017249	«Այլուս գրուպ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4092.7
30.	90003863	«Մերոպ Մաշտոց Համալսարան» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4065.4
31.	90018697	«Արցախ կարի-կոշիկի արտ. միավ.» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4014.2
32.	90023576	«Ֆոր դիրեկշնս» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4000.0
33.	90026704	«Վերանորոգման, շինարարության տնտեսություն» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3922.9
34.	90012812	«Ստեփանակերտ սերվիս» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3900.0
35.	90027001	«Արցախտոլի» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3780.0
36.	90000143	«Արդյունաբերական շինարարական կոմբինատ թիվ 1» ԲԲԸ	գ.Բերքածոր	3774.3
37.	90013144	«Պետրոլ սերվիս» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3458.3
38.	90028409	«Մեքենատրակտորային կայան» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3378.1
39.	90016752	«Ծանշին» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3186.3
40.	90029918	«ՖԴ-Սոֆիա» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3030.9
41.	90012365	«Զարավան» ՍՊԸ	գ.Բերքածոր	3001.3



ՀՀ ք. Երևան
Գրիգոր Լուսավորչի 13
Հեռ. 54 04 04
www.ashib.am

ԼՂՀ ք. Ստեփանակերտ
Ազատամարտիկների 26
Հեռ. 94 15 39
www.ashib.am

Առաջին 100 խոշոր հարկ վճարողները և նրանց կողմից վճարված հարկերի և տուրքերի մեծությունները

Գ/Գ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	2011թ. հունվար-մարտ ամիսներին հարկ վճարողի կողմից ԼՂՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը /հազ.դրամ/				
				այդ թվում				
				Ընդամենը	ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտահարկ)	անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ, ակցիզային հարկ)	հաստատա գրված վճարներ	այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ
1.	90016169	«Բեյզ մեթըլս» ՓԲԸ	գ. Դրմբն	823855.4	142000.0	439000.0		242855.4
2.	90015278	«Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	293373.7	40104.2	240873.0		12396.5
3.	90010189	«Արցախգազ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	239739.2	4092.2	228313.4		7333.6
4.	90000186	«Արցախէներգո» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	141921.1	14360.5	118542.5		9018.1
5.	90001386	«Արցախբանկ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	105374.2	98896.3	319.7		6158.2
6.	90017188	«Պանտ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	43219.7	6146.0	36056.8		1016.9
7.	90022272	«Ստեփանակերտի կոնյակի գործարան» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	36632.5	550.0	36057.5		25.0
8.	90012365	«Քարավան» ՍՊԸ	գ. Բերքաձոր	32123.6	8190.6	20248.0		3685.0
9.	90013144	«Պետրոլ սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	25193.5	1104.8	14.6	21486.4	2587.7
10.	90016787	«Սիգմա գրուպ սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	22958.3	1512.1	20703.4		742.8
11.	90070057	«Արցախ Բրենդի կոմպանի» ՓԲԸ	ք. Ասկերան	22400.6	2227.2	17237.9	50.7	2884.8
12.	90025315	«Արցախ ՋԷԿ» ԲԲԸ	ք. Ստեփանակերտ	22053.2	14977.5	1233.3		5842.4
13.	90025813	«Տեխնոշին» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	20779.4	6456.3	11802.3		2520.8
14.	90213737	«Պրոմագրոսերվիս» ՓԲԸ	ք. Մարտունի	20372.9	1014.7	19345.0		13.2
15.	90213015	«Ավանգարդ» ՍՊԸ	ք. Մարտունի	19740.8	288.6		1672.3	17779.9
16.	90002165	«Վիրաժ» ԱԿ	ք. Ստեփանակերտ	19404.0	4957.9	13074.7		1371.4
17.	90071281	«Դորոժիկ» ՍՊԸ	գ. Այգեստան	19000.0		15000.0		4000.0
18.	90003056	«Մեչտա» ԱԿ	ք. Ստեփանակերտ	18673.0	1200.0	13676.2	281.6	3515.2
19.	90024957	«Շինվեր պլյուս» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	16687.7	1284.3	14359.6		1043.8
20.	90025307	«Սուր Նարեկ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	16636.4	1663.3	14237.5		735.6
21.	90022317	«Գրանդ կոմերց» ՍՊԸ Արցախի մասնաճյուղ	ք. Ստեփանակերտ	14067.4	669.3			13398.1
22.	90000324	ԼՂՀ Ոստիկանության պետական պահպանության վարչություն	ք. Ստեփանակերտ	13810.1	188.7	13344.9		276.5
23.	90027079	«Պրիմա գրուպ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	13767.1	88.8		187.6	13490.7
24.	90212588	«Լուսակերտ» ՍՊԸ	ք. Մարտունի	13630.9	1126.1	11972.7		532.1
25.	90026928	«Տեխնոսոլու» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	12531.7	1380.7	10825.1		325.9
26.	90027209	«Ադրիանա» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	11940.8	1300.9	10121.4		518.5
27.	90008901	ԼՂՀ «Հանրային հեռուստառադիոընկերություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	11706.7	1402.0	10085.3		219.4
28.	90001705	«Օկեան» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	11089.4	357.7			10731.7
29.	90012812	«Ստեփանակերտ Սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	10754.0	4150.0	54.0	5200.0	1350.0
30.	90282664	«Արարատշինտրան» ՍՊԸ	գ. Այգեստան	10450.0	866.0	9082.8		501.2
31.	90026025	«Երեքուկ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	10345.0	977.6	2665.1		6702.3
32.	90010207	«Ձի Էֆ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	10111.8	272.2	9570.0		269.6
33.	90414369	Բաղդասարյան Արմեն ա/ձ	ք. Ստեփանակերտ	9751.5	331.2			9420.3
34.	90014336	«Պրոգրես» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	9655.2	4145.6	5266.9		242.7
35.	90026704	«Վերանորոգման շինարարության տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	9548.5	3089.7	5776.0		682.8
36.	90018172	«Կապիտալ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	9237.1	245.6			8991.5
37.	90016323	«ԲԼԱՐԳ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	8511.3	917.3	7369.0		225.0
38.	90014541	«Ղիզակ պլյուս» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	8343.1	1960.5	6130.9		251.7
39.	90070701	«Վրեժ» ՓԲԸ	գ. Այգեստան	8264.8		8264.8		
40.	90282605	«Հաբանդ» ՍՊԸ	գ. Տոլ	8042.1	1052.9	6421.6		567.6
41.	90073588	«Դորկապ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	7901.4	2947.1	4153.1		801.2
42.	90018886	«Գևատ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	7865.6	173.0			7692.6
43.	90003237	«Բերդ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	7539.4	2362.5	5000.0		176.9
44.	90016177	«Հայաստանի բիզնեսի հիմնադրամ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	7532.0	7532.0			
45.	90012176	«Վարարակն» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	7435.3	1012.9	6232.0		190.4
46.	90006038	«Ջրային տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	7396.1	7052.0			344.1
47.	90024038	«Չիգ գազ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	7350.7	47.3	30.0		7273.4
48.	90281903	«Պարզև» ՍՊԸ	ք. Հաղրոթ	7161.4	50.4			7111.0
49.	90023765	«Սեար գրուպ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	7083.0	546.1	1897.3		4639.6
50.	90012064	«Բարի Հոգի» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	7070.0	350.0			6720.0



Առաջին 100 խոշոր հարկ վճարողները և նրանց կողմից վճարված հարկերի և տուրքերի մեծությունները

Գ/Գ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	2011թ. հունվար-մարտ ամիսներին հարկ վճարողի կողմից ԼՂՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը /հազ.դրամ/				
				այդ թվում				
				Ընդամենը	ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտահարկ)	անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ, ակցիզային հարկ)	հաստատագրված վճարներ	այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ
51.	9000143	«Արդյունաբերական շինարարական կոմբինատ թիվ 1» ՓԲԸ	գ.Բերքաձոր	6941.9	1381.8	4976.9		583.2
52.	90012099	«Ֆարմսերվիս» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	6698.1	1035.4	4977.5		685.2
53.	90073649	«Միլանո Էլ. Ջի.» ՍՊԸ	ք.Ասկերան	6615.7	133.2	2351.0		4131.5
54.	90003099	«SBS» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	6521.0	472.0			6049.0
55.	90018654	«Ֆլեշ-պլյուս» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	6375.9	537.8	133.3	5057.4	647.4
56.	90070246	«Սևան» ՍՊԸ	գ.Իվանյան	6232.1	455.2	1568.7	3608.5	599.7
57.	90009361	«Արցախճան ինտերնոտ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	6226.3	868.0	5000.8		357.5
58.	90019907	«Արտադրական կոմբինատ - 3» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	6165.5	1105.5	3829.4		1230.6
59.	90005352	«Էներգո» ԱԿ	ք.Ստեփանակերտ	6125.0	1000.0	5000.0		125.0
60.	90016752	«Ճանշին» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	5466.5	1349.0	3600.6		516.9
61.	90018697	«Արցախ կարի-կոշիկի արտ. միավ.» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	5423.9	3115.8			2308.1
62.	90000298	«Զերմային տնտեսություն» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	5214.0	452.1	4454.2		307.7
63.	90005051	«Գրիգոր Նարեկացի» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	5072.8	4126.8	106.0	90.0	750.0
64.	90014653	«Շիշմանյան» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	5049.2		5049.2		
65.	90023576	«Ֆոր Դիրեկշն» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	5037.7	2441.0			2596.7
66.	90013333	«Արցախերկեսեմետ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4997.3	4525.3			472.0
67.	90001833	«Արցախփոստ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4904.0	1772.2	2268.8		863.0
68.	90001559	«Նորայր Եւ Հրայր եղբայրներ» ԱԿ	ք.Ստեփանակերտ	4870.1	468.6			4401.5
69.	90341889	ԼՂՀ ըս «Վահե Կարապետյան ճանշահագործում» ՓԲԸ	ք. Շոռուշի	4805.7	1205.7	3600.0		
70.	90029599	«Կարմիր Նուռ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4789.3	13.1	4613.0		163.2
71.	90024243	«Սերկար» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4743.0	1189.4	3340.4		213.2
72.	90019228	«Օմեգա գրուպ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4696.9	79.3		4500.0	117.6
73.	90212476	«Ստարտ պլյուս» ՍՊԸ	գ.Սարգսաշեն	4622.9	352.5	3000.0	338.4	932.0
74.	90026446	«Գրքալ Շին» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4620.9	3636.9			984.0
75.	90017582	«Մերկուրի» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4609.9	354.0			4255.9
76.	90013565	«Աշոց» ՍՊԸ	ք.Ասկերան	4484.2	2530.8	1853.4		100.0
77.	90012322	«Բնակարանային շահագործման տնտեսություն» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4433.2	1528.6	2702.5		202.1
78.	90020698	«ԱՏՐ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4405.9	359.8	3841.0		205.1
79.	90010282	«Արցախկաթ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4403.7	962.7	3146.0		295.0
80.	90019476	«Տեխնանդերմանք» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4375.8	484.8	3367.6		523.4
81.	90070118	«Վահագն-84» ԱԿ	ք. Ասկերան	4342.9	19.9	4112.2	70.0	140.8
82.	90027406	«Տեխնո ՎՆ Սերվիս» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4245.3	48.7			4196.6
83.	90029873	«Միկմետայլ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4220.1	190.2	49.0		3980.9
84.	90004685	«Շինհարթակ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4001.7	649.4	3234.7		117.6
85.	90029401	«ՄԱԲՍ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3955.4	403.5	3405.9		146.0
86.	90024467	«ԱԻՍ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3953.3	797.0	3081.7		74.6
87.	90025297	«Արեգակ» ունիվերսալ վարկային կազմակերպություն Ստեփ. մաս.	ք.Ստեփանակերտ	3924.8	624.8	3100.0		200.0
88.	90019529	«Զի սթայլ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3826.1	559.2	2950.1		316.8
89.	90017249	«Այլուս գրուպ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3692.5	1458.3	1001.1	984.5	248.6
90.	90001721	«Կիլիկիա» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3615.4	13.2	3407.1		195.1
91.	90002519	«Միրաժ» ԱԿ	ք.Ստեփանակերտ	3590.4	820.3	777.5		1992.6
92.	90004179	«Արմինկո-ՆԿ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3552.5	154.8	2949.0		448.7
93.	90280248	«Աշոտիկ» ՍՊԸ	ք.Հաղորութ	3509.3	556.0	2119.3	250.1	583.9
94.	90025049	«Էռմի» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3499.7	829.8	1794.9		875.0
95.	90010111	«Ավտոբազա» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3502.0	968.5	88.2	1773.0	672.3
96.	90025022	« Զի Ես Մոթորս» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3462.4	22.4		45.0	3395.0
97.	90024097	«Լիգոնավ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3449.6	806.1			2643.5
98.	10002136	«Վահանյան Վահան» ՍՊԸ	ք.Բերձոր	3409.6	1461.4	1948.2		
99.	90001498	«Հարութ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3385.4	250.0			3135.4
100.	90016307	«Միդլայն» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3306.1	159.5	3085.0		61.6

THE BEST.

ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ԼԻՆԵԼՈՒ ՄՈԴԵԼԸ



«Մեր ընկերության արտադրանքի 80 տոկոսն արտահանվում է», - արձանագրում է «Արցախֆրոտ»-ի տնօրեն Գագիկ Ներսիսյանը

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Կորպորատիվ կառավարման բարձրագույն դպրոցի գիտական խորհրդի նախագահ Աբել Աղանբեգյանը շրջում է «Արցախֆրոտ» ընկերության տարածքում: Արցախյան գյուղատնտեսության զարգացմանը ուշի ուշով հետևող ակադեմիկոսի փորձառու աչքից ոչինչ չի վրիպում. կազմակերպությունը, կարելի է ասել, նորաստեղծ է՝ ընդամենը չորս տարվա պատմություն ունի, բայց այսքան առաջ է գնացել...

Ինչքան հոռետեսներ ու թերահավատներ կային, բայց արի ու տես՝ և՛ շինարարություն

ավարտվեց նախատեսված ժամկետում, և՛ հոսքագծերի տեղադրումը չուշացավ: «Ո՞վ կպատկերացներ, որ այս կարճ ժամանակահատվածում ընկերության արտադրանքն այդքան պահանջված կլիներ ոչ միայն այստեղ, այլ նաև ռուսաստանյան շուկայում և ոչ միայն այդտեղ: Սա լավագույն օրինակ է, թե ցանկության դեպքում ինչպես կարելի է աշխատել և կայանալ Արցախում», - Ռուսաստան վերադառնալուն պես շտապել է շնորհակալական նամակ գրել Ա.Աղանբեգյանը՝ ուղարկելով այն «Արցախֆրոտ»-ի ղեկավար Գագիկ Ներսիսյանին:



ԱՐՏԱՍԱՐՅԱՆՅԱՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ՊԱՅԱՆՁՈՒՄ ԵՆ «ԱՐՑԱԽՖՐՈՒՄ»

-Պարոն Ներսիսյան, «Արցախֆրուտ»-ն իր մեկնարկը բավականին բարձր ցուցանիշներով սկսեց: Խոսքը, մասնավորապես, ընկերության արտադրական հզորությունների մասին է: Այդ առումով ի՞նչ է փոխվել ընկերության գործունեության օրվանից առ այսօր:

- «Արցախֆրուտ»-ն իր մեկնարկն, իրոք, բարձր կետից տվեց: Ընկերությունն ի սկզբանե հանձն էր առել մթերել հանրապետությունում արտադրված մրգի ու բանջարեղենի որջ ծավալը. դա կարող էր նպաստել գյուղատնտեսության մի շարք ճյուղերի զարգացմանը: Արդյունքում առ այսօր արտադրական հզորություններն ավելացնելու անհրաժեշտություն չի զգացվել, փոխարենը որոշակի բազմազանություն ենք ապահովել՝ նաև ավելացնելով մուրաբաների տեսականին:

Այս տարիներին, ինչ խոսք, մեծածավալ աշխատանք է կատարվել: Այսպես, եթե 2008-ին խոսքն ընդամենը 14-15 տեսակի արտադրանքի մասին էր, ապա այսօր այդ թիվը 40-ի ենք հասցրել:

-Իսկ որքանով է հաջողվում հումքի անհրաժեշտ քանակն ապահովել:

-Այս առումով նախ պետք է նշեմ, որ «Արցախֆրուտ»-ը ոչ թե պարզապես հումք հայթայթելու, այլ այն հենց մեր հանրապետությունում գտնելու խնդիր ունի: Այդ գործում առայժմ որոշակի խնդիրներ, այնուամենայնիվ, առաջանում են՝ և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պատճառներով: Նախ՝ մարդիկ դժվարությամբ են համակերպվում այն մտքին, որ գյուղատնտեսությունը, մասնավորապես՝ երկրագործությունը, կարող է շահութաբեր ոլորտ լի-

նել: Փորձում ենք ամրապնդել ինչպես այդ միտքը, այնպես էլ՝ այդ ոլորտում աշխատող մարդկանց սեփական պարտավորությունների հանդեպ պատասխանատվությունը: Ֆերմերների հետ պայմանագրային հարաբերություններ ենք ձևավորում:

-Արցախում Ձեր ընկերությունը նաև խոշոր գործատուներից է:

-Այո, հատկապես աշխատանքների ակտիվ շրջանում՝ ապրիլից մինչև հոկտեմբեր, ընկերության աշխատակիցների թիվն ավելի է մեծանում՝



Անցած տարի մեր արտադրանքի միայն 19 տոկոսն է իրացվել Արցախում և Հայաստանում: Ռուսաստան, Ուկրաինա, Ֆրանսիա, Արաբական Միացյալ Էմիրություններ, մեր արտադրանքի իրացման հիմնական շուկաներն այս պահին սրանք են: Այս տարի նախատեսում ենք իրացման ծավալներն ավելացնել առնվազն մեկուկես անգամ:



Ինչ վերաբերում է կոնկրետ արդյունքներին, ապա 2010-ին ընդհանուր առմամբ 400 տոննա միրգ ու բանջարեղեն ենք մթերել: Գյուղատնտեսության համար տարին անբարենպաստ էր, բայց այս տարի ավելի լավատես ենք. նախատեսում ենք կրկնապատկել մթերման ծավալները:

հասնելով շուրջ 200-ի: Պատկերացնո՞ւմ եք, ծանրաբեռնված ամիսներին անգամ որոշ դժվարություններ են առաջանում՝ աշխատողների պակասի պատճառով:

-Պարոն Ներսիսյան, ծանոթ լինելով «Արցախֆրուտ»-ի արտադրանքին, վստահորեն կարող եմ ասել, որ այն



հաստատ մեծ պահանջարկ կունենա ոչ միայն Արցախում: Ո՞ր երկրների շուկաներում են արդեն փնտրում Ձեր ընկերության արտադրանքը:

-Սա շատ կարևոր հարց է մեզ համար: Ի վերջո, հենց իրացման ցուցանիշներով է պայմանավորվում աշխատակիցների թիվը, մթերման ծավալները և այլն:

Մեր արտադրանքի մեծ մասն իրացվում է հիմնականում արտերկրում: Օրինակ, անցած տարի մեր արտադրանքի միայն 19 տոկոսն է իրացվել Արցախում և Հայաստանում: Ռուսաստան, Ուկրաինա, Ֆրանսիա, Արաբական Միացյալ Էմիրություններ. մեր արտադրանքի իրացման հիմնական շուկաներն այս պահին սրանք են: Ավելին՝ այդ երկրներում «Արցախֆրուտ»-ի պահանջարկն անընդհատ աճում է:

-Իսկ ո՞ր ապրանքատեսակն է առավել պահանջված սպառողի կողմից:

-Ամենապահանջվածը մուրաբաներն են: Բավական մեծ է նաև հյութերի, բանջարեղենի ու անգամ՝ խաղողի տերևի պահանջարկը:

-Պարոն Ներսիսյան, նման պահանջարկը, թերևս, Ձեզ կստիպի նոր շուկաներ նվաճելու ծրագրեր կազմել, հատկապես որ նախատեսում եք կրկնապատկել մթերման ծավալները: Այդ ուղղությամբ ի՞նչ եք ծրագրում:

-Այս տարի նախատեսում ենք իրացման ծավալներն ավելացնել առնվազն մեկուկես անգամ: Համագործակցության եզրեր ենք փնտրում նաև նոր գործընկերների հետ: Առաջին իսկ հնարավորության դեպքում չենք հապաղում արցախյան արտադրանքը ներկայացնել միջազգային կամ համահայկական ցուցահանդեսներում: 2010-ին այդ նպատակով եղել ենք Մոսկվայում, Մարսելում, Ալմաթիում և, իհարկե, Երևանում: Սրանք քայլեր են, որոնց արդյունքն

անպայման զգում ենք հետագայում: Ի դեպ, մեր ընկերության մի շարք արտադրատեսակներ բարձր գնահատականների և մեդալների են արժանացել: Բայց մեզ համար ամենաբարձր գնահատականը սպառողի վստահությունն է. եթե «Արցախֆրուտ»-ի արտադրանքի պահանջարկը մեծանում է, ուրեմն մեր ջանքերը պտուղներ են տալիս:

- Իսկ որքանով է արցախյան հարկային դաշտը նպաստավոր Ձեր գործունեության համար:

-Պետք է նշեմ, որ այդ առումով «Արցախֆրուտ»-ը շահեկան դիրքերում է: Առավել ևս, երբ խոսքը տեղական գյուղատնտեսական արտադրանքի մթերման մասին է. մեր երկրում վերամշակումն ազատվում է ԱԱՀ-ից: Առայժմ փաստաթղթաշրջանառությունն է ժամանակատար, քանի որ մեր մթերողները ստիպված են տվյալ համայնքների ղեկավարներից համապատասխան տեղեկանքներ ներկայացնել, որոնք կհավաստեն, որ իսկապես տեղական արտադրության ապրանք են մթերում:

Եթե 2008-ին խոսքն ընդամենը 14-15 տեսակի արտադրանքի մասին էր, ապա այսօր այդ թիվը 40-ի ենք հասցրել:



ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ

ՀԱՏԿԱՊԵՍ

ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

Սեպտեմբեր

I	II	III	IV	V	VI	VII
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30		

բոլոր մանրամասներն այստեղ՝

www.tax.nk.am

«ՎԻՐՋԻՆԻԱ», «ԲԵՌԼԵՅ», «ՍԱՍՍՈՒՆ»` ԱՐՑԱԽԻՅ.

«ՄԱՍԻՍ ՏՈՐԱԿՈ»-Ն ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ Է ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

Ապահովեք ձեր ներկայությունը նաև հայկական երկրորդ հանրապետությունում և դարձեք վերամշակող արդյունաբերության ոլորտը զարգացնողներից մեկը. Արցախի ղեկավարության՝ տարիներ առաջ արված այս հայտարարությունն ուղղված էր հատկապես տվյալ ոլորտում էական հաջողություններ գրանցած հայաստանյան խոշոր գործարարներին: Առաջին արձագանքը չուշացավ, և

արցախյան բիզնես աշխարհում լայն թափով իր գործունեությունը սկսեց ծխախոտագործության ոլորտի հսկա «Մասիս Տորակո»-ն:

Արցախցիների համար ծխախոտի մշակումը խորթ չէր. ժամանակին տարիներ շարունակ ծխախոտի մշակմամբ էին հայտնի ոչ միայն Ասկերանի, այլև՝ Մարտակերտի շրջանները:

«Մենք ներդրումներ ենք անում մեր՝ հայկական հողում, և հենց այդ գիտակցումն է մեզ համար կարևոր»



Վերջ «անցյալ ժամանակներին»։ անցան այն տարիները, երբ Արցախում ամեն անգամ հոգոց էին հանում, երբ թեման ծխախոտագործությունն էր: Դատարկ տեղը լցվեց, և արդեն երկու տարի է, ինչ մոտեցումն այս ոլորտում 180 աստիճանով փոխվել է: Սա այլևս այն ճյուղն է, որը էլ ավելի զարգացնելու և ընդլայնելու ծրագրեր են կազմվում: Հիմքերի հիմքն այս դեպքում «Մասիս Տոբակո»-ն է: Այս ընկերությունն Արցախում գործի անցավ 2009-ից՝ սկսելով ծխախոտի առաջին չորանոցների կառուցումը Իվանյանում: Չուգահեռ ակտիվ աշխատանքներ են տարվել հողօգտագործողների հետ, որոնցից մեծ մասի համար ծխախոտի մշակումը նորույթ էր: Գործունեության առաջին տարվա ձեռքբերումները ոգևորել են և՛ ընկերության ղեկավարությանը, և՛ ֆերմերներին: Հետագայում արձանագրվող ցուցանիշների սանդղակի նիշն էլ ավելի է բարձրացել՝ անդրադառնալով նախ ծխախոտի մշակման ծավալների վրա, որոնք երկուսուկես անգամ աճել են: «Նախորդ տարի 35 հեկտար ծխախոտ ենք մշակել: Առաջին փորձից և արդյունքներից դժգոհ չենք: Իհարկե, եղան նաև ֆերմերներ, որոնք ակնկալած արդյունքը չստացան, բայց, ընդհանուր առմամբ, ցուցանիշները գոհացնող են», - մանրամասնում է Իվանյանի ընդունման կետի պատասխանատու Վյաչեսլավ Նազարյանը: Նրա տվյալներով՝ այս տարի արդեն 120 հեկտարի մշակման հայտ է ընդունվել, որոնցից ընտրվել է կեսից ավելին՝ 85 հեկտարը: Դա նախատեսված է «Վիրջինիա» տեսակի ծխախոտի մշակման համար: Կան նաև «Բեռլեյ» և «Սամուն» տեսակներ, որոնց մշակման հայտեր ևս ընդունվել են:

Մշակվող ծխախոտի ծավալների ընդլայնման գործում, բնականաբար, էական էր նաև մթերող կազմակերպության արձագանքը, որը համարժեք էր: Իվանյանի մթերման կետում նոր չորանոցների շինարարություն է ծավալվել: «Մասիս Տոբակո»-ի՝ Արցախի գործակալ Արտակ Ղահրամանյանի տեղեկացմամբ՝ Իվանյանում ընկերությունն արդեն 16 չորանոց ունի: Միաժամանակ նորերն են կառուցվում: Այնպես որ այս տարի չորանոցների թիվը կավելանա ևս 8-ով: Եվ այդ ամենի արդյունքում Իվանյանի ընդունման կետը կունենա արդեն չորանոցման 24 խցիկ, իսկ այդ հզորությամբ հնարավոր կլինի իրականաց-




Մեկ հեկտարից շուրջ 1.5մլն դրամի եկամուտ է կանխատեսվում:

նել 85 հեկտարից ստացվելիք ծխախոտի նախնական մշակումը:

Բայց «Մասիս Տոբակո»-ն միայն չորանոցների կառուցմամբ չի սահմանափակվում: Ընկերությունը որոշակի օժանդակություն է նախատեսում նաև այն հողօգտագործողների համար, որոնց հետ պայմանագրային հարաբերությունների մեջ է մտնում: «Բացի այն, որ մեր գործընկերները ընկերության մասնագետներից մշտապես անվճար խորհրդատվություն ստանալու հնարավորություն ունեն, մեզ հետ պայմանագրեր ունցող ֆերմերներին նաև ծխախոտի սերմեր և սածիլներ ենք տրամադրում ու նաև՝ ֆինանսական աջակցություն՝ մշակվող մեկ հեկտար ծխախոտի հաշվարկով՝ 200 հազար դրամ», - մանրամասնում է Վյաչեսլավ Նազարյանը:

Կազմակերպության գործընկերների մեջ մեծ թիվ են կազմում Իվանյանի բնակիչները: Նրանցից շատերը նախորդ տարի ծխախոտ են մշակել հիմնականում ոչ իրենց համայնքի տարածքում: Այս տարի նրանցից ոմանք բախտները կփորձեն նաև Իվանյանում: Վերջիններիս թվում է նաև համայնքի ղեկավարը՝ Բորիս Ղահրամանյանը: Այս տարի նա երկու հեկտար ծխախոտ կմշակի: Նախորդ տարվա արդյունքներից Ղահրամանյանն այդքան էլ գոհ չէ, միայն թե անհաջողությունը վերագրում է տվյալ ոլորտում սեփական անփորձությանը:

Ոչ պակաս կարևոր թեմա՝ ակնկալվող եկամուտներ: Ընկերությունում հաշվարկել են. Իվանյանի մթերման կետում ծխախոտի մեկ կիլոգրամ կանաչ տերևն այս տարի կընդունվի միջինը 72-73 դրամով: Մեկ հեկտարի միջին բերքատվությունը պետք է կազմի 20-25 տոննա: Արդյունքում մեկ հեկտարից շուրջ 1.5մլն դրամի եկամուտ է կանխատեսվում: Իսկ ահա շահույթի չափը պատասխանատուները պայմանավորում են հողօգտագործողների կազմակերպչական ընդունակություններով:

Այս առումով ուշագրավ է «Մասիս Տոբակո»-ի հիմնադիր Միքայել Վարդանյանի համոզմունքը. «Այս ոլորտին շահութաբերության գնահատականներ, որպես կանոն, տասը տարի հետո են տրվում: Ամեն դեպքում՝ մենք ներդրումներ ենք անում մեր՝ հայկական հողում, և հենց այդ գիտակցումն է մեզ համար կարևոր»: 



«Մասիս Տոբակո»-ն միայն չորանոցների կառուցմամբ չի սահմանափակվում: Ընկերությունը որոշակի օժանդակություն է նախատեսում նաև այն հողօգտագործողների համար, որոնց հետ պայմանագրային հարաբերությունների մեջ է մտնում:



Մարտակերտի արտադրանքը որակական հատկանիշներով չի գիջում շուկայում առկա նմանատիպ ապրանքատեսակներին: Այնպես որ, պիտակների վրա հպարտությամբ է նշվում՝ «Արտադրված է ԼՂՀ, քաղաք Մարտակերտ»:





MADE IN ՄԱՐՏԱԿԵՐՏ

Սպասված նախադասությունը վերադարձել է

Փորք և միջին բիզնեսի զարգացումը՝ Արցախի տնտեսական զարգացման առաջնահերթություն: Սա այն ոլորտներից է, որտեղ անելիք դեռ շատ կա, միաժամանակ ակնհայտ է, որ այս ուղղությամբ էական մի շարք քայլեր արդեն իսկ արվել են: Թեև ոչ ակտիվ տեմպերով, փոքր ու միջին ձեռնարկատիրությունն այստեղ աստիճանաբար ամրապնդվում է: Արցախում ընդգծված ուշադրության կենտրոնում են հատկապես այն բիզնեսները, որոնք ստեղծվում և կայանում են պատերազմից էապես տուժած շրջաններում: Կոնկրետ օրինակը վերաբերում է Մարտակերտին, որը մի քանի անգամ ձեռքից ձեռք է անցել, ազատագրվել գերությունից. այս դեպքում հարցը, տնտեսականից բացի, նաև քաղաքական ենթատեքստ է ստանում:



Արցախում ընդգծված ուշադրության կենտրոնում են հատկապես այն բիզնեսները, որոնք ստեղծվում և կայանում են պատերազմից էապես տուժած շրջաններում:


«Արզի գրուպ» ՍՊԸ. այս անվամբ ընկերությունը համարձակորեն և վստահ մուտք գործեց Մարտակերտի բիզնես-միջավայր մեկ տարի առաջ, և այսօր արդեն հայտնի է իր լիմոնադներով և սեղանի ջրով: Մարտակերտցիները դա համարում են հին ու բարի ժամանակների վերադարձ. նմանատիպ արտադրամաս այստեղ գործել է մինչև պատերազմը: Հին արտադրամասի վերագործարկման ու վերագինման պատասխանատվությունն իր վրա է վերցրել նախկին ղեկավարի որդին՝ Արամ Իզմայիլյանը:

Անհրաժեշտ հումքը եւ տարաները ներկրվում են: Սպառման շուկան առայժմ այդքան էլ մեծ չէ. արտադրանքի հիմնական մասը տեղում է իրացվում: Ընկերության ղեկավարությունը, սակայն, շուկան ընդլայնելու ծրագրեր է մշակում, հատկապես որ տեխնիկական ներուժը դա թույլ է տալիս: Հոսքագիծն ի վիճակի է ժամում 1500-2000 շիշ արտադրանք ապահովել: Մեծ է նաև տեսականին՝ մոտ երկու տասնյակ անուն, այնինչ ներքին շուկան դեռևս ի վիճակի չէ ընդունել այդ ծավալները: Ներկայումս մեծ շահույթների մասին խոսք չկա, բայց, Արամ Իզմայիլյանի խոսքով՝ չի բացառվում, որ ամռանը

«Արզի գրուպ»-ի արտադրանքի պահանջարկը մեծանա: Մյուս կողմից արդեն արտահանման ծրագրեր էլ են կազմվում: «Փորձելու ենք ուղիներ ու տարբերակներ գտնել, որպեսզի մեր արտադրանքը ներկայացվի նաև Արցախի սահմաններից դուրս», -տեղեկացնում է ընկերության ղեկավարը: Ինչ վերաբերում է որակին, ապա Ա.Իզմայիլյանը վստահեցնում է՝ Մարտակերտի արտադրանքը որակական հատկանիշներով չի գիշում շուկայում առկա նմանատիպ ապրանքատեսակներին: Այնպես որ, պիտակների վրա հպարտությամբ է նշվում՝ «Արտադրված է ԼՂՀ, քաղաք Մարտակերտ»:

Արտադրամասն ունի մշտական աշխատակիցներ, որոնց կազմում ընդգրկվել են նաև նորերը՝ Մոսկվայում վերապատրաստում անցած կադրեր: Մի մասի ուսուցումը կազմակերպելու նպատակով էլ հատուկ մասնագետներ են հրավիրվել:

www.itax.nk.am ■ թեժ գիծ (+374 47) 948-620



2 բոսաշրջային նոր սեզոնը՝ նորույթներով: Արցախ ժամանողների ընտրությունը մեծանում է. այս տարվանից նրանց սպասում են նաև նորաբաց՝ «Պարկ հոթել Արցախ» հյուրանոցային համալիրում, որը գտնվում է Ստեփանակերտում: Արցախը զբոսաշրջության ոլորտում չիրացված բազմաթիվ հնարավորություններ ունի, ինչի մասին շատ է խոսվել: Եղած ներուժը լիարժեք օգտագործելու

համար նախ պետք է համապատասխան միջավայր ապահովել: Խոսքը, մասնավորապես, հյուրանոցային բարձրակարգ ծառայություններին է վերաբերում: Պատահական չէ, որ այդ ոլորտում արձանագրված փոփոխություններն անմիջապես հայտնվում են երկրի ղեկավարության ուշադրության կենտրոնում: Ըստ անհրաժեշտության՝ պետական աջակցությունն էլ չի ուշանում:



WELCOME TO «ՊԱՐԿ ՀՈԹԵԼ ԱՐՅԱԽ»

Ե՛Վ ՀԱՆԳՍՏԱՆԱԼՈՒ, Ե՛Վ ԱՐՅԱԽԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ընդամենը երեք տարի և 300 հազար դոլարից ավելի ներդրում, և արցախյան հյուրանոցային ոլորտում հայտնվում է նոր անուն՝ «Պարկ հոթել Արցախ»:

Կառավարության որոշմամբ՝ մարզային պոլիկլինիկայի՝ Ստեփանակերտում տեղակայված նախկին շինությունը 2007 թվականին հանձնվել էր «Զբոսաշրջային կենտրոն» ՓԲԸ-ին՝ այդտեղ շուրջ 300 հազար դոլարի ներդրում կատարելու եւ մոտ երկու տասնյակ մշտական աշխատատեղ ապահովելու պայմանով:

Չորս տարվա ընթացքում պոլիկլինիկայի նախկին շենքը վերանորոգվել է՝ վերածվելով հյուրանոցային համալիրի՝ մեկ տեղանոցից մինչև ընտանեկան և լյուքս համարներով: «Պարկ հոթել Արցախ»-ն ի վիճակի է միանգամից ավելի քան 50 հյուր ընդունել: Վերանորոգելիս՝ փորձ է արվել հնարավորինս հավատարիմ մնալ շենքի ճարտարապետական դիմագծին. այդ սկզբունքը պահպանվել է նաև համալիրը կահավորելիս: «Կատարված ներդրումները վաղուց արդեն հատել են 300 հազար դոլարի սահմանագիծը: Վերանորոգման եւ կահավորման աշխատանքները դեռ շարունակվում են: Նախատեսվում է նաև բացօթյա սրճարան ունենալ: Օրակարգում է հյուրանոցի շրջակա տարածքների բարեկարգումը, ինչը ևս լուրջ միջոցներ է պահանջում: Աշխատանքներն ամբողջությամբ

ավարտելուց հետո միայն կկարողանանք խոսել կատարված ներդրումների իրական ծավալների մասին», - վստահեցնում է «Զբոսաշրջային կենտրոն»-ի տնօրեն Դավիթ Իշխանյանը:

Հյուրանոցում հաջողվել է պահպանել ազգային դիմագիծը՝ միաժամանակ դա զուգակցելով ժամանակակից լուծումներով, ինչի արդյունքում համալիրում ընդգծված հարմարավետ մթնոլորտ է ստեղծվել: Նույն մոտեցումն է նաև դրսևորվել «Պարկ հոթել Արցախ»-ը կահավորելիս: «Մեր հյուրերն այստեղ նախ և առաջ պետք է իրենց հարմարավետ զգան: Մենք օգտագործում ենք բոլոր հնարավորությունները՝ հյուրերին մեր երկիրն ու մշակույթը ներկայացնելու համար: Արցախյան խոհանոցը ևս առաջնային տեղում է: Հյուրանոցի սրահները կահավորված են մեր ազգային ոճով: Բացի այդ, ցանկության դեպքում մեր հյուրերը հնարավորություն կունենան նաև մեր առաջարկած զբոսաշրջային փաթեթներից օգտվել և Արցախն ավելի մոտիկից ճանաչել», - տեղեկացնում է Դավիթ Իշխանյանը:

Այս կարգի հյուրանոցային համալիրում էական է նաև սպասարկող անձնակազմի ընտրությունը: Այս հարցում ղեկավարության դիրքորոշումը հստակ է՝ բոլոր աշխատակիցները պետք է վերապատրաստված լինեն: Նրանց ուսուցման վերջնական փուլն



Մեր հյուրերն այստեղ նախ և առաջ պետք է իրենց հարմարավետ զգան: Մենք օգտագործում ենք բոլոր հնարավորությունները՝ հյուրերին մեր երկիրն ու մշակույթը ներկայացնելու համար: Հյուրանոցում հաջողվել է պահպանել ազգային դիմագիծը՝ միաժամանակ դա զուգակցելով ժամանակակից լուծումներով:

անցկացվել է երևանյան հյուրանոցներում:

Ինչ վերաբերում է գնային քաղաքականությանը, ապա, ինչպես պատասխանատուներն են ակնարկում, այս հարցում հաշվի է առնվելու տեղի շուկան: ☑

Այս տարվա ապրիլին կառավարության լիազոր մարմնի և «Էյ Ի Ջի» ընկերության միջև ստորագրված պայմանագրով «Արցախգազ»-ի և «Արցախէներգո»-ի գործադիր մարմինների լիազորությունները փոխանցվել են «Էյ Ի Ջի»-ին: Այսինքն՝ հենց այս կազմակերպությունն է ստանձնում այդ երկու ընկերությունների տնօրինումը: «Արցախգազ»-ն ու «Արցախէներգո»-ն այսօր նաև Արցախի խոշոր գործատուներից են: Չի բացառվում, որ այս

փոփոխություններին հաջորդի աշխատատեղերի օպտիմալացումը. դա չեն թաքցնում նաև կառավարության ներկայացուցիչները:

Ի վերջո՝ նպատակը ինչպես համակարգի, այնպես էլ նրա կառավարման արդիականացումն է: Այս ընկերությունները ոչ միայն խոշոր գործատուներ են, այլ նաև՝ խոշոր հարկատուներ: Ի՞նչ տեղաշարժ է ակնկալվում նոր կարգավիճակում: Այդ հարցում պատասխանատուները լավատես են:





«ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ԵՆՔ ԶԱՍՑՆԵԼՈՒ ՎՆԱՍՆԵՐԸ»

Հարցազրույց «Էյ Ի Ջի» ընկերության գլխավոր տնօրեն Լևոն Մնացականյանի հետ

-Պարոն Մնացականյան, այսպիսով «Էյ Ի Ջի»-ն ստանձնել է հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող երկու կարևոր ոլորտների կառավարումը: «Էյ Ի Ջի» ասելով՝ ի՞նչ է հասկանում արցախցին:

-Մեր ընկերությունն ընդամենը մեկ տարվա պատմություն ունի՝ ստեղծվել է 2010թ.-ի մայիսին, այդ իսկ պատճառով այն դեռևս այդքան էլ հայտնի չէ արցախցիների շրջանում: Հիմնադիրը Հայաստանում գործող «Էյ Ի Ջի սերվիս» ընկերությունն է, որն ընկերությունների կառավարման բավականին հարուստ փորձ ունի: Մասնավորապես Հայաստանում այն ղեկավարում է մի քանի շրջանների ջրային տնտեսություններ, իրականացնում է ներտնային գազասպասարկման աշխատանքներ:

- Ընկերության մուտքն Արցախ, թերևս, ոչ այնքան բիզնես է, որքան՝ տրարարություն:

-Այո, այսօրվա դրությամբ դա չենք կարող բիզնես համարել, քանի որ «Արցախագազ»-ի և «Արցախէներգո»-ի կառավարումից շահույթ չենք ակնկալում: Մենք փորձելու ենք դաշտ ստեղծել հետագա բիզնեսի համար, որտեղ, մեզանից բացի, մուտք կունենան բոլոր նրանք, ովքեր նպատակահարմար կգտնեն ներդրումներ իրականացնել այդ ոլորտներում:

-«Արցախագազ»-ում և «Արցախէներգո»-ում նախապես աուդիտ էր անցկացվել: Հետևություններն ինչպիսի՞ն են:

-Աուդիտն իրականացվել է անցած

տարի՝ մասնագիտացված աուդիտորական ընկերության կողմից: Նախական արդյունքներն արդեն կան: Մենք Լեռնային Ղարաբաղում մասնագետների խիստ պակաս ունենք, մասնավորապես, ֆինանսատնտեսական և հաշվապահական ոլորտներում: Պարզվել է, որ երկու ընկերություններում էլ հաշվապահության հետ կապված լուրջ խնդիրներ կան: Մեր ծրագրերի մեջ նաև մասնագետների վերապատրաստումն է ներառված՝ Հայաստանում, իսկ որոշ դեպքերում՝ արտասահմանում: Կփորձենք մասնագետների համապատասխան կազմ ապահովել հենց տեղում: ԲՈՒՀ-երում կան երիտասարդ և խոստումնալից ուսանողներ: Նրանց հետ պարբերաբար հանդիպումներ ենք ունենում: Փորձելու ենք առանձնացնել առավել աջքի ընկնող կադրերին և վերապատրաստումից հետո նրանց ևս ներառել այս կազմակերպությունների աշխատանքներում:

Մեր նպատակն է՝ Արցախում ներդնել համաշխարհային պրակտիկայում փորձարկված պլանավորման և մոտիվացիայի համակարգեր:

Առաջին փուլում ձգտելու ենք սկզբագույնի հասցնել վնասները:

Խնդիրը միայն կորուստները չեն: Վերջին տարիներին այդ ոլորտներում բավական ներդրումներ են արվել, ինչի արդյունքում կորուստները զգալիորեն կրճատվել են: Փոխարենը շատ են աշխատանքները կառավարման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Խոսքը վերաբերում է ծախ-

սերի կառուցվածքի վերանայմանը, դրանց օպտիմալացմանը:

ԳՈՐԾԱՐԸՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ԶԱՐԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԱ ԶԻ ԱՇԴԵԼՈՒ

Ե՛վ «Արցախագազ»-ը, և՛ «Արցախէներգո»-ն այսօր աշխատում են արդյունավետ: Այլ հարց է, որ լրացուցիչ և պահանջված ներդրումների շնորհիվ այդ ընկերությունների շահութաբերությունը կարելի է անհամեմատ բարձրացնել: Խորհրդային տարիներից ժամանակ էլ ենք արդեն մաշված ենթակառուցվածքներ: Խոսքն ամենից առաջ էլեկտրաէներգիայի մատակարարման մասին է: Դրանք թարմացնելու և արդիականացնելու համար հսկայական գումարներ ու տասնյակ տարիներ են պահանջվում:

Գործարքի արդյունքում սակագների փոփոխություն չի լինելու: Արդեն հայտնի է, որ գազի սակագինն այս տարի անփոփոխ կմնա: Ինչ վերաբերում է էլեկտրաէներգիայի սակագնին, ապա ամենաբարձր մակարդակով հայտարարվել է, որ այն չի աճի առաջիկա մի քանի տարիների ընթացքում:

ԼՂՀ Արտադրական ենթակառուցվածքների նախարար Կառլեն Պետրոսյան

-Աշխատանքի հիմնական ուղղությունները, կարծես, հստակեցվել են: Այս ժամանակահատվածում ինչ-որ տեղաշարժ նկատվե՞լ է:

-Մենք կառավարումը ստանձնեցինք ապրիլի 1-ից, բայց նախորդ ամիսների ընթացքում երկու ընկերություններում էլ մեծածավալ աշխատանք ենք կատարել: Մասնավորապես վերանայել ենք տեղեկատվական բազաները, ին-



«ՏԱՐԻՆԵՐՈՎ ՍՊԱՍԵԼՈՒ ՓՈԽԱՐԵՆ ԳԵՐԱԴԱՍՈՒՄ ԵՆՔ ԿՈՆԿՐԵՏ ՔԱՅԼԵՐ ԿԱՏԱՐԵԼ»

Տասնամյակներ սպասելու փոխարեն՝ Արցախի կառավարությունը նախընտրել է այդ ընկերությունների կառավարումը հանձնել ոլորտում մասնագիտացած մասնավոր կազմակերպության: Կառավարության ընդունած որոշումը դա է նշանակում: Միջազգային պրակտիկայում ընդունված տարբերակ է՝ ոլորտը հանձնել մասնագիտացած կազմակերպության կառավարմանը: Մեզ համար դա գուցե նորույթ է, բայց բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ Նախատանում, այդ փորձը հաջողությամբ է գործում:

Ճիշտ է, «Արցախէներգո»-ն՝ 2002 թվականից եւ «Արցախգազ»-ը՝ 2007 թվականից ներառված են սեփականաշնորհման ենթակա պետական սեփականության ցանկում, բայց խոսքն այս

դեպքում դրա մասին չէ. այդ ընկերություններն այս պահին ընդամենը կառավարման են հանձնվում:

Անընդունելի եմ համարում նաև այս գործարքի և «Ղարաբաղ տելեկոմ»-ի հետ ունեցած պայմանագրի միջև զուգահեռների անցկացումը: Այս դեպքում ընկերությունների սեփականատիրոջ՝ կառավարության վերահսկողության եւ միջամտության լծակներն անհամեմատ ուժեղ կլինեն: Պարբերաբար կներկայացվեն կատարողականները: Պայմանագիրը կկնքվի 3 տարի ժամկետով՝ լրացուցիչ մեկ տարով երկարաձգելու հնարավորությամբ: Իսկ կառավարությունը, առանց նախապայմանների, կարող է ցանկացած պահի դադարեցնել պայմանագիրը:

ԼՂԳ Տնտեսական զարգացման նախարար Կարեն Եսայան

չի շնորհիվ գոնե Ստեփանակերտում հնարավոր է դարձել «Արցախփոստ»-ի բաժանմունքներում վճարումներն ընդունել առանց վճարման գրքույկների: Սա զգալիորեն բարձրացնում է հավաքագրման արդյունավետությունը: Նաև այդ գործընթացում ավելի քիչ աշխատակիցներ ներգրավելու հնարավորություն է ստեղծվում. կառավարման օպտիմալացումը նաև դա է ենթադրում:

- Փաստորեն, և՛ «Արցախգազ»-ում, և՛ «Արցախէներգո»-ում լուրջ ներդրումների անհրաժեշտություն կա:

-Իսկապես, երկու ընկերություններում դա հրատապ խնդիր է, հատկապես՝ «Արցախէներգո»-ում: Պետք է փոխվեն հաշվիչները, ենթակայանները պետք է արդիականացվեն: Մինչ այժմ այս ոլորտներում ներդրումներ եր անում պետությունը: Չենց այդ ներդրումների շնորհիվ բարելավվել է սպասարկման մակարդակը, իսկ կորուստներն Արցախում գրեթե հավասարվել են հայաստանյան ցուցանիշներին: Իրականաց-

ված ներդրումների տեմպերը գոհացուցիչ են: Վստահ եմք, դրանք ավելի արդյունավետ կառավարելու պարագայում կունենանք ավելի ակնառու արդյունքներ: Առաջին փուլում հիմնական ներդրումներն ակնկալում ենք հենց պետությունից: Եթե դրան զուգահեռ կարողանանք գրավիչ ներդրումային դաշտ ապահովել, չեն բացառվի նաև մասնավոր ներդրումները: «Արցախ ՅԷԿ»-ը դրա լավագույն օրինակն է:

-«Արցախգազ»-ի և «Արցախէներգո»-ի հետագա կառավարման սկզբունքների շուրջ քննարկումները չեն դադարում,

տարաբնույթ մեկնաբանություններ են շրջանառվում:

-Ամեն ինչ հստակ ձևակերպված է պայմանագրի մեջ: Կառավարման պայմանագրով մեզ են փոխանցվել երկու ընկերությունների գործադիր մարմինների լիազորությունները: Ավելի պարզ՝ «Էյ Ի Ջի»-ն դարձել է երկու ընկերությունների տնօրենը: Նույն պայմանագրով նախատեսված է, որ ընկերություններից յուրաքանչյուրում մենք պետք է նշանակենք գործադիր տնօրեն և տեղակալ, ինչն իրականացվել է կառավարման պայմանագրի ստորագրման օրը: ☑



«Արցախգազ»-ի և «Արցախէներգո»-ի կառավարումից շահույթ չենք ակնկալում: Մենք փորձելու ենք դաշտ ստեղծել հետագա բիզնեսի համար, որտեղ, մեզանից բացի, մուտք կունենան բոլոր նրանք, ովքեր նպատակահարմար կգտնեն ներդրումներ իրականացնել այդ ոլորտներում:

**բոլոր հարցերն
ունեն իրենց
պատասխանները՝**

www.tax.nk.am

«ԿԱ ՅԱՆԿՈՒԹՅՈՒՆ, ԿԼԻՆԻ ԵՎ ԲԻԶՆԵՍ» ԲԱՅԱՅԱՅՏՎՈՒՄ Է «ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ» ԲԱՆԱԶԵՎԸ



Այս կամ այն երկրում տնտեսական ազատությունների մասին դատում են փոքր ու միջին բիզնեսի համար ստեղծված պայմաններով: Արցախում պետբյուջեի հարկային մուտքերի առյուծի բաժինը խոշոր հարկատուներն են ապահովում, այդուհանդերձ պետությունը լուրջ քայլեր է ձեռնարկում, որպեսզի փոքր և միջին բիզնեսը նպաստավոր պայմաններում գործի: Որքանով է բարեփոխումների արդյունքը զգում նոր բիզնես սկսող տնտեսվարողը:

Իրավիճակի հստակեցում՝ «Միլենիում»-ի օրինակով. իր բիզնես-պատմությունն է վերհիշել ընկերության տնօրեն Սամվել Սեյրանյանը:

«Միլենիում»-ն Արցախում արդեն «հասուն» ընկերություն է համարվում. նրա աշխատանքային մեծ փորձն ու ձեռքբերումները սկսնակ գործարարների համար շատ պարզ օրինակ է, թե ինչի կարելի է հասնել ու կայանալ, եթե կա ընդամենը մեկ բան՝ ցանկություն:

«Միլենիում»-ը ցանկացավ ու սկսեց: Սկզբնական շրջանում՝ երեք տարի առաջ, սպառողին նախ առաջարկվեցին եվրոպատուհաններ և եվրոդռներ, ապա նաև՝ շերտավարագույր-

ներ: Այսպես ասած՝ մեկնարկային գումար գտնելն ամենևին էլ խնդիր չէր. հարցը լուծվել է Արցախի ներդրումային հիմնադրամի միջոցով, որն ընդառաջ է գնացել՝ տրամադրելով արտոնյալ պայմաններով վարկ: «Հիմնադրամում առանձնապես դժվարություններ չեղան, ինչից հետո էլ շատ կարճ ժամանակահատվածում Ստեփանակերտում բացված արտադրամասը սկսեց գործել», - հիշում է Սամվել Սեյրանյանը: «Միլենիում»-ի արտադրանքն



աստիճանաբար պահանջված դարձավ: Ընկերության ղեկավարի տվյալներով՝ պատվերների պակաս չի զգացվում, դրանք ստացվում են ինչպես մայրաքաղաքից, այնպես էլ հանրապետության բոլոր շրջաններից: Այդ դեպքում էլ «Միլենիում»-ի գնային քաղաքականությունը հստակ է՝ հեռավորությունը որևէ կերպ չպետք է ազդի արժեքի վրա:

Ռոբն Է Արցախում աշխատելու թիվ մեկ դժվարությունը. «Միանշանակ շուկայի՝ փոքր լինելու հանգամանքը»,-արձանագրում է Սամվել Սեյրանյանը:

«Պետք է պարզապես ազնիվ աշխատել և սեփական պարտավորություններին պատասխանատվությամբ վերաբերվել»,-հիշեցնում է «Միլենիում»-ի տնօրենը: Այդ գործելաոճը միայն դրական արդյունքներ է խոստանում:



«Յուրաքանչյուր ամբողջովին ներկրում ենք, իսկ ահա արտադրանքը պետք է հենց տեղում իրացնենք: Մրցակցությունն էլ բավականին խիստ է: Միայն Ստեփանակերտում տասնյակ արտադրամասեր են գործում»,- ընդգծում է «Միլենիում»-ի տնօրենը:

Ոչ պակաս կարևոր է աշխատուժի խնդիրը: Այսօր արտադրամասն ութաշխատակից ունի: «Բոլորն էլ համապատասխան ուսուցման փուլ են անցել, այդ առումով մենք խնդիրներ չունենք»,- նշում է Սամվել Սեյրանյանը, ով արձանագրում է՝ խնդիրներ չեն ծագում նաև հարկային մարմինների հետ: Այստեղ շատ կարևոր

է տնտեսվարողի մոտեցումը ևս, ում սկզբունքների սկզբունքը պետք է լինի ազնվությունը: «Պետք է պարզապես ազնիվ աշխատել և սեփական պարտավորություններին պատասխանատվությամբ վերաբերվել»,-հիշեցնում է «Միլենիում»-ի տնօրենը: Այդ գործելաոճը միայն դրական արդյունքներ է խոստանում: Այս տարի, օրինակ, ընկերությունում լուրջ փոփոխություններ են սպասվում. արդեն իսկ նոր արտադրամաս է կառուցվում, որի հարևանությամբ արդեն ավտոլվացման կետ է գործում: Այնպես որ, պետք է ընդամենն անել առաջին և գլխավոր քայլը՝ ցանկանալ: ☑

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԸ ԽՈՒՄԱՓՈՒՄ ԵՆ ՀԱՐԿԵՐԻՑ


Sunday Times-ի տվյալներով, Մեծ Բրիտանիայի բյուջեն տասնյակ միլիոնավոր ֆունտ ստերլինգ չի ստանում ֆուտբոլիստների եկամուտների հարկերից: Որոշ ֆինանսական մուտքերից հարկային վճարումներն անցած երկու տարիներին կազմել են ընդամենը երկու տոկոս: Պարբերականի տվյալներով, Ուեյն Ռունին նախորդ երկու տարիներին չի վճարել 600 հազար ֆունտ ստերլինգ, Գարեթ Բերրին՝ 135 հազար: Ֆուտբոլիստները հարկերից խուսափում են օրինական ճանապարհով:

Այն բանից հետո, երբ Մեծ Բրիտանիայի ֆինանսների նախարար Ալիսթեր Դարլինգը հայտարարեց, որ գերհարուստ բրիտանացիների հարկային բեռը հասցվելու է 50 տոկոսի, անգլիական ֆուտբոլային ակումբների բազմաթիվ խաղացողներ իրենց իրավաբանների խորհրդով նետվեցին տարբեր ընկերություններ ստեղծելու: Այդ ընկերությունների օգնությամբ նրանք օրենքի շրջանակում կարողացան նվազագույնի հասցնել հարկային վճարումները:

Օրինական ճանապարհներից մեկը ակումբի հետ երկու պայմանագրի կնքումն է: Մի պայմանագրով ֆուտբոլիստն աշխատավարձ է ստանում ակումբից, իսկ մյուսով՝ գումար



Է ստանում տարբեր առևտրային նախագծերում իր «իմիջային իրավունքների» վաճառքի համար: Այդ նախագծերի շրջանակում իրականացվում է ֆուտբոլիստի նկարով կամ անունով տարատեսակ պարագաների վաճառք: Այդպիսի առևտրային ձեռնարկումներից ստացված եկամուտը փոխանցվում է ոչ թե ֆուտբոլիստին, այլ նրա ստեղծած ընկերությանը, որը վճարում է 28 տոկոս կորպորատիվ հարկ: Եթե ֆուտբոլիստը գումարը ստանար անմիջականորեն ակումբից, ապա ստիպված կլիներ վճարել 50 տոկոս հարկ:





ԼՈՆԴՈՆԸ ԿՐՃԱՏՈՒՄ Է ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՐԿԵՐԸ.

Մեծ Բրիտանիան՝ G7-ի հարկային առաջատար

2011թ. ապրիլի 1-ից Մեծ Բրիտանիան յուր և յուր կորպորատիվ հարկը (ընկերությունների եկամտահարկը) 28%-ից նվազեցվել է մինչև 26%, իսկ մինչև 2014-2015 թթ. կկրճատվի մինչև 23%: Այս մասին հայտարարել է Մեծ Բրիտանիայի ֆինանսների նախարար Ջորջ Օսբորնը՝ ներկայացնելով Մեծ Բրիտանիայի՝ 2011-2012թթ. բյուջեն: Ավելի վաղ բրիտանական զանգվածային լրատվամիջոցներն ակնկալում էին, որ 2011թ. կորպորատիվ հարկը կիջեցվի մինչև 27%:

Ըստ Օսբորնի՝ նոր միջոցառման շնորհիվ Մեծ Բրիտանիայում կսահմանվի ամենացածր կորպորատիվ հարկը Մեծ

յոթնյակի (G7) երկրների շրջանում: Մեծ Բրիտանիայի ֆինանսների նախարարի խոսքով՝ իրենց երկիրը բաց է բիզնեսի համար, և ըստ իր հաշվարկների՝ հարկի նվազեցման համար Թագավորության բյուջեն մինչև 2014-2015թթ. կծախսի 1 մլրդ ֆունտ ստերլինգ:

Միաժամանակ Օսբորնը հայտարարել է, որ Յյուսիսային ծովում նավթ և գազ արդյունահանող ընկերությունների նկատմամբ սահմանված հարկերը 20%-ից կբարձրացվեն մինչև 32%:

Ֆրանսիական Agence France-Presse-ի հաղորդմամբ՝ այս քայլը Մեծ Բրիտանիայի բյուջեին կապահովի լրացու-

ցիչ 2 մլրդ ֆունտ ստերլինգ, բացի այդ, 630 մլն ֆունտ ստերլինգ էլ կապահովի բանկերի հարկերի բարձրացումը: Իսկ 2012թ.-ից Մեծ Բրիտանիայում կմեծանան այն եկամուտների ծավալները, որոնք չեն հարկվում:

Ըստ Օսբորնի՝ 2011թ. Մեծ Բրիտանիայի ՀՆԱ-ն կաճի 1,7%-ով՝ ավելի վաղ կանխատեսվող 2,1%-ի փոխարեն, իսկ 2012թ.՝ 2,5%-ով՝ կանխատեսված 2,6%-ի փոխարեն: Այս փոփոխությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ 2010թ. 4-րդ եռամսյակում Մեծ Բրիտանիայի ՀՆԱ-ն անսպասելիորեն կրճատվել է: Բացի այդ՝ հաշվի էր առնվել գնաճի տեմպերը:



Ստեփանակերտ, Կոմունյացների 25 Հեռ.՝(+37447) 943412
Ֆաքս.՝(+37447) 971542
www.ab.am, www.artsakhbank.am